# Ազգ
Azg

20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 191 (4571)

ISSN: 1829-1651


## Վարչապետ Էրդողանը վերստին գրոհի է անցնում Իսրայելի դեմ

Հոկտեմբերի 22-ին Աթենքում տեղի կունենա Միջերկրականի երկրների համաժողովը՝ նվիրված երկրագնդի վրա կլիմայի փոփոխության խնդիրներին: Մասնակիցների թվում է նաեւ Թուրքիան: Համաժողովի նախօրյակին հունական հեռուստատեսությանը տված հարցազրույցում, ինչպես երեկ նշել էր «Դունյա բուլթենի» կայքէջը, Թուրքիայի վարչապետ Էրդողանը վերստին գրոհի է անցել Իսրայելի դեմ:

Նա մասնավորապես ասել է. «Եթե Իսրայելի վարչապետը մասնակցի աթենքյան միջոցառմանը, ապա ես չեմ գա: Չեմ կարող հանդիպել մի վարչապետի հետ, որը հպարտանում է զինված գործողություններով: Այդ առումով Իսրայելը տարածաշրջանում հասել է իր կարեւորագույն բարեկամին կորցնելու շեմին: Եվ այդ բարեկամը՝ Թուրքիան է»:

Թուրքիայի վարչապետը միաժամանակ նշել է, որ Իսրայելի կառավարությունը վերջապես գին պետք է վճարի որդեգրած նախահարձակ քաղաքականությունների համար: Ի դեպ, Իսրայելը, թուրքական կայքէջի վկայությամբ, չի պատկանում Աթենքում նախատեսվող համաժողովի մասնակիցների թվին: Այլ կերպ, միանգամայն ավելորդ է վարչապետ Նաթանյահուի դեմ Էրդողանի ձեռնարկած հերթական գրոհը:

Հ. Չ.

## Որո՞նք են կառավարության 2011-ի թիրախային նպատակները

### *Եվ որո՞նք պետք է ընդգրկվեին, բայց բացակայում են*

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



Վարչապետ Տիգրան Սարգսյանի կողմից բյուջե 2011-ի ներկայացումը ԱԺ հանձնաժողովների համատեղ նիստում որոշակիորեն տարբերվում էր նախորդ տարիների ներկայացումից, քանի որ, բացի զուտ բյուջետային ցուցանիշները ներկայացնելուց, նա անդրադարձավ նաեւ տնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ կառավարության քաղաքականությանը եւ 2011-ի համար նախատեսված հիմնական թիրախներին:

Երեւի ավելորդ է նշել, որ տնտեսության մեկ ճյուղից մեծ կախվածության հետեւանքով 2009-ին տնտեսական մեծ անկում ունեցանք, եւ ակնհայտ է, որ բացի շինարարությունից, հարկ է խթանել տնտեսության մյուս ճյուղերի, հատկապես արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը: Որո՞նք են այս ուղղությամբ **Տիգրան Սարգսյանի** մասնանշած միջոցառումները եւ որո՞նք են ոչ պակաս կարեւորություն ունեցող այն քայլերը, որոնք բացակայում են 2011-ի թիրախային նպատակների մեջ:

Ըստ վարչապետի, 2011-ին ներկայացվելու է կառավարության ինդուստրիալ քաղաքականության ռազմավարությունը, որն ուղղված է լինելու արտահանման խթանմանը: Այդ շրջանակներում նախատեսվում է արդեն փետրվար-մարտին «Զվարթնոց» օդանավակայանի մոտ ազատ տնտեսական գոտու բացումը, որտեղ կիրականացվի գյուղմթերքների գնումը, փաթեթավորումը, լաբորատոր ստուգումը եւ արտահանումը հենց օդանավակայանից: Այդ նպատակով կառուցվում է նաեւ սառնարանային համալիր: Սննդարդյունաբերության ոլորտում Տիգրան Սարգսյանի մասնանշած մյուս ծրագրերն են հայկական պանրի եւ ձկան արտահանման աջակցությունը:

*Տես էջ 3*

## Վարչապետ Տիգրան Սարգսյանի շնորհավորական ուղերձը Ռուսաստանի հայերի միության հիմնադրման տասնամյակի առթիվ

Ջերմորեն շնորհավորում եմ Ռուսաստանի հայերի միության հիմնադրման տասնամյակը: Անցած տարիների ընթացքում կազմակերպությունը ծավալել է բեղուն գործունեություն եւ իրականացրել է բազում հաջողված ծրագրեր: Եվ այսօր Ռուսաստանի հայերի միությունը հանդես է գալիս որպես հայությանն ու մեր ժողովրդի ներուժը միավորող ամենազանգվածային կառույցներից մեկը:

Ուրախությամբ պետք է նշեմ, որ Ռուսաստանի հայերի միությունն իր հայրենանվեր ու կարեւոր դերակատարմամբ փաստում է ոչ միայն Հայկական աշխարհի գոյությունն ու կենսունակությունը, այլեւ վկայությունն է այն հեռանկարի, որը կարող է ունենալ Հայկական աշխարհն ու համայն հայությունը՝ ջանքերի միավորման ու գաղափարական միասնության դեպքում:

Իր աշխատանքը միությունը կառուցել է առանցքային սկզբունքների՝ հայրենասիրության ու հայապահպանության վրա՝ հետեւողականության ու ժամանակակից աշխարհի հետ համաքայլ գործելու անհրաժեշտության գիտակցմամբ: Կազմակերպությունը տասնամյա գործունեության ընթացքում իր ուշադրության կենտրոնում է պահել Ռուսաստանում ապրող հայերի խնդիրներն ու նրանց շահերի պաշտպանությունը եւ լայնամասշտաբ ծրագրեր իրականացրել Հայաստանում եւ Արցախում՝ նպաստելով երկու հայկական պետականությունների սոցիալական, կրթական ու հոգեւոր առաջընթացին:

Կրկին շնորհավորելով Ռուսաստանի հայերի միության տասնամյակը՝ մաղթում եմ նորանոր հաջողություններ հայրենանվեր բոլոր ձեռնարկումներում:

**ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ**
**ՀՀ վարչապետ**

**ՀԱՆԴԻՊՈՒՄ**

## Լուրջ առաջընթացի բացակայությունը՝ միջնորդների առաջարկությունները մերժող ադրբեջանական դիրքորոշման արդյունք

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը երեկ ընդունել է Սերբիայի ԱԳ նախարար **Վուկ Երեմիչին**, որը Հայաստանում է գտնվում Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարության ապագայի համար» ֆորումին մասնակցելու նպատակով:

Ըստ պաշտոնական հաղորդագրության, նախարար Նալբանդյանը, անդրադառնալով արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացին, նշել է, որ միջազգային հանրությունը՝ ի դեմս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, ջանքեր է գործադրում հակամարտությունը լուծելու ուղղությամբ, սակայն միջնորդների առաջարկությունները մերժող ադրբեջանական դիրքորոշման պատճառով չի հաջողվում լուրջ առաջընթաց արձանագրել բանակցություններում:

Նալբանդյանն ընդգծել է, որ Սերբիայի նախագահ Բորիս Թադիչի՝ անցյալ տարի կատարած այցելությունը Հայաստան, այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները կարեւոր քայլ էին երկկողմ հարաբերությունների զարգացման ուղղությամբ, իսկ նախարարների մակարդակով պարբերական հանդիպումները հնարավորություն են՝ հետեւելու նախագահական մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների կատարմանը, մտքեր փոխանակելու տարբեր հարցերի շուրջը:

Նախարարներ Էդվարդ Նալբանդյանը եւ Վուկ Երեմիչը կարեւորել են երկու երկրների քաղաքական, տնտեսական եւ հումանիտար բնագավառներում համագործակցության ընդլայնման նպատակով իրականացվելիք քայլերը:

Սերբիայի արտգործնախարարը ներկայացրել է Կոսովոյի հիմնախնդրին առնչվող զարգացումները:

Ա. Հ.

## ՀՀ նախագահը ներկա է գտնվել SCADA համակարգի գործարկման արարողությանը



ՖՈՏՈԼՈՒՐ

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ Երեւանում ներկա է գտնվել Հայաստանի էներգահամակարգում տվյալների հավաքագրման եւ կարգավարական կառավարման SCADA համակարգի գործարկման արարողությանը:

Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը ՀՀ նախագահին է ներկայացրել Հայաստանի էներգետիկ ոլորտի համար կարեւոր նշանակություն ունեցող այս համակարգի հնարավորությունները եւ ներդրված հատուկ ծրագրերը: Համակարգի ներդրումը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ իրականացնելու էներգահամակարգի կառավարումը: Էներգահամակարգում տվյալների հավաքագրման եւ կարգավարական կառավարման համակարգի նախագիծն իրականացվելու է մի քանի փուլով: Հանրապետության ղեկավարը ծանոթացել է նաեւ հետագա փուլերում նախատեսվող ծրագրերին: Առաջին փուլի իրականացման նպատակով Հայաստանի կառավարության եւ Միջազգային համագործակցության ճապոնական բանկի միջեւ (ներկայումս՝ Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) վարկային համաձայնագիր է կնքվել:

SCADA համակարգի գործարկման արարողությանը մասնակցել է նաեւ Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Մասահարու Կոնոն: Վերջինս հիշյալ նախագիծը համարել է հայ-ճապոնական բարեկամության, համագործակցության լավագույն օրինակներից մեկը եւ նշել է, որ իր երկիրը պատրաստակամ է աջակցելու Հայաստանի տնտեսության զարգացմանը միտված նախաձեռնություններին:

Ի. Պ.

**ԳՈՒՅԺ**

## Հարութ Երեցյան

**Շատ ցավալի լուր ստացվեց Լոս Անջելեսից. ընդամենը 65 տարեկան հասակում, կարճատեւ ու սարսափելի հիվանդությունից հետո կյանքից հեռացել է Հարութ Երեցյանը, մտավորականների, գրողների, թատերական գործիչների, նկարիչների սիրելի մի անձնավորություն, որի «ամրոցը» հանդիսանում էր տեղի «Ապրիլ» գրատունը, որ ժամադրավայրն էր արվեստն ու գրականությունը սիրող մարդկանց, այդ թվում նաեւ Հայաստանից այցելողների: Ծնվել էր Բեյրութում, բարձրագույն կրթությունն ստացել Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտում (ռեժիսուրա), 1970-ականների կեսերից ապրում եւ աշխատում էր Մ. Նահանգներում: 1980-90-ական թթ.-ին հրատարակում էր «Ապրիլ» ամսագիրը, ճաշակավոր, խստապահանջ մի հանդես, որը դարձել էր կենսունակ կառույց եւ հանդիպավայր Հայաստանի եւ Սփյուռքի գրասեր-արվեստասեր հասարակության համար: Անդամ էր Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչության (տեսնել վարչության մահագրականը 6-րդ էջում) եւ տեղի ԹՄՄիության հեղինակավոր կազմակերպիչներից մեկը: Առանց նրան ոչ մի ցուցահանդես եւ ոչ մի ձեռնարկ չէր կազմակերպվում Լոս Անջելեսի ԹՄՄ շրջանակում, քանզի նա բարձրաճաշակ էր, անկաշառ, անկեղծ, ուղիղ ու գործնական: Նաեւ զարմանալի ընկերասեր:**

**«Երեցի» կորուստը, ինչպես կոչում էին նրան մտերմական շրջանակում, իսկապես ծանր է ոչ միայն հարազատների եւ ընկերների, այլեւ ողջ ամերիկահայության համար:**

**Ցավակցություններ հարազատներին եւ ընկերներին:**

## Քննարկվում են Սաադ Հարիրիի այցի նոր ժամկետները

Հոկտեմբերի 16-ին Լիբանանում Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարյանը հանդիպում է ունեցել Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրիի հետ: Քննարկվել են երկկողմ հարաբերություններին առնչվող խնդիրներ:

ԱԳՆ հաղորդագրության համաձայն, երկուստեք կարեւորվել է բարձր մակարդակի փոխայցելությունների, առեւտրատնտեսական հարաբերությունների խորացման եւ ընդլայնման, իրավապայմանագրային դաշտի թարմացման, գործարար համաժողովների անցկացման անհրաժեշտությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկելու վարչապետ Հարիրիի Հայաստան կատարելիք հնարավոր այցի նոր ժամկետները: Դեսպան Քոչարյանը վարչապետ Հարիրիին փոխանցել է Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի ողջույններն ու բարեմաղթանքները:

Սաադ Հարիրի այցը պետք է տեղի ունենար հոկտեմբերի առաջին տասնօրյակում: «**Ազգի**» տեղեկություններով, Հարիրին Հայաստան այցը հետաձգել էր Լիբանանում քաղաքական իրավիճակի սրման պատճառով: Լիբանանի վարչապետի այցելությունը, ըստ մեր տեղեկությունների, տեղի կունենա առաջին իսկ հարմար ժամանակահատվածում:

Նախնական հայտարարության համաձայն՝ Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով Հայաստանում պետք է լիներ հոկտեմբերի 7-ին՝ երկօրյա այցի շրջանակներում: Նախատեսվում էր, որ Լիբանանի վարչապետի այցի ընթացքում կողմերը պետք է քննարկեին 6 տարի առաջ ստեղծված համատեղ միջկառավարական հանձնաժողովի աշխատանքները: Լիբանանի վարչապետի՝ Հայաստան այցելության ընթացքում նախատեսված էին հանդիպումներ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի ու Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ:

Ա. Հ.

# Դպրոցը մեր հասարակության հայելին է

Աժ պատգամավոր **Անահիտ Բախշյանը** եւ հոգեվերլուծաբան **Ռուբեն Պողոսյանը** երեկ անդրադարձան ինտերնետում տեղադրված այն տեսագրություններին, որտեղ հայ մանկավարժները բռնություն են կիրառում աշակերտների հանդեպ: Ինտերնետում երեխաները վերջերս են տեղադրել այդ տեսագրությունները: «Մանկավարժության մեջ ամենացայտուն բամաձեւը հետեւյալն է՝ ինչ տալիս ես, այն էլ հետ ես ստանում», «Դե ֆակտո» ակումբում նշեց Անահիտ Բախշյանը, որը նաեւ մանկավարժի տարիների փորձ ունի: Եթե մանկավարժն աշակերտին սեր ու ջերմություն է տալիս, նույնն էլ հետ է ստանում, եթե կիրառում է բռնություն, ապա մեծանում են քաղաքացիներ, որոնք հասարակության համար պատուհասներ են դառնում: Ըստ Անահիտ Բախշյանի՝ դպրոցում պետք է աշխատեն այնպիսի մանկավարժներ, որոնք առաջին հերթին գնահատում են երեխայի արժանապատվությունը. «Երեխաները շատ տարբեր են, մանկավարժի հմտությունը կայանում է նրանում, որ նա տիրապետի տարբեր գործիքների, որոնցով կկարողանա մտնել երեխայի հոգին»: Անահիտ Բախշյանը կարծում է, որ խորհրդային տարիների եւ այսօրվա մանկավարժությունը շատ իրարամերժ են: Խորհրդային դպրոցում կենտրոնում դասն էր, որը կոնկրետ ձեւերով պետք է անցներ: «Որպես մանկավարժ ես ավելի արդյունավետ ձեւ եմ գտել՝ դասի կենտրոնում աշակերտն է, եւ սա շատ ավելի բարդ մանկավարժություն է», նշեց Անահիտ Բախշյանը: Վերջինս բացատրում է, որ կրթվելու կարիքը երեխայի համար ընդամենը 5-րդ տեղում է: Լրագրողների հարցին, իսկ ինչպե՞ս վարվի ուսուցիչը, երբ երեխաները նրան «հունից հանում են», չէ՞ որ այսօրվա երեխաների հետ աշխատելը շատ դժվար է, Անահիտ Բախշյանը պատասխանեց. «Երեխաներին մի՛ մեղադրեք. սերունդը հասարակության հայելին է»: Որ աշակերտներն իրենք են նկարահանում եւ ինտերնետում տեղադրում տեսագրությունները, երեխաների այս քայլն Ա. Բախշյանն այսպես գնահատեց. «Սա նշանակում է, որ մեր հասարակությունն առողջանում է: Սրանք քաղաքացիական հասարակության ծիլերն են»:

Հոգեբան Ռուբեն Պողոսյանը նույնպես կարեւորեց մանկավարժի դերը երեխաների կյանքում: Հոգեբանի խոսքով՝ իր լավագույն տարիները մարդն անցկացնում է դպրոցում. «Մարդու անձը դպրոցում է կերտվում»: Այստեղ շատ կարեւոր է մանկավարժի դերը, քանի որ մարդու անձը կերտվում է հենց ուսուցչի միջոցով: Դպրոցում մանկավարժի մեծագույն խնդիրը ոչ թե գիտելիք տալն է, այլ երեխաներին դաստիարակելը: «Մեր մանկավարժները շատ վատ են ճանաչում երեխաների տարիքային առանձնահատկությունները», նշեց հոգեբանը:

Ա. Բախշյանն էլ խոսեց դպրոցների տնօրենների մասին. «Տնօրենը չի դառնում մանկավարժների ավագ ընկերն ու խորհրդատուն եւ չի կազմակերպում կրթությունն օրենքին համապատասխան: Մենք ունենք բավականին լավ օրենքներ եւ կրթության զարգացման պետական ծրագիր»: Ա. Բախշյանը հավելեց, որ այսօր դպրոցների տնօրեններն այն մարդիկ են, որոնք ձեռնտու են այս կամ այն իշխանավորին: Ըստ կանոնադրության՝ տնօրենի առաջին պարտականությունն ուսուցիչների վերապատրաստման գործընթացը կազմակերպելն է: Այնուհետեւ Ռուբեն Պողոսյանն անդրադարձավ ուսուցիչների հեղինակության հարցին. «Ուսուցչի հեղինակությունը, ինչ-որ տեղ, մենք կորցրել ենք: Մեր հանրապետությունում մանկավարժի վարկանիշը բոլոր մասնագիտությունների մեջ վերջից 3-րդ տեղում է»:

«**Ազգի**» հարցին, թե լավ մանկավարժներ պատրաստելու համար բանախոսներն ի՞նչ մեխանիզմներ են առաջարկում, հոգեբանը պատասխանեց. «Շատ բարդ հարց եք տալիս: Մինչեւ բուհ ընդունվելն ապագա մանկավարժը պետք է միջանկյալ քննաշրջան՝ բուֆեր, անցնի»: Ռ. Պողոսյանը բացատրեց, որ բուֆերի մեջ մտնում են առանձին հարցազրույցը, թեստավորումն ու գրավոր աշխատանքը. «Այս մասին մենք առաջարկել ենք, սակայն եւ՛ սուբյեկտիվ, եւ՛ օբյեկտիվ պատճառներով ղեկավարությունը չի գնում դրան»: Մեխանիզմներ առաջարկելը բարդ է, սակայն մանկավարժներին կամ Մանկավարժական համալսարանը քննադատելը՝ շատ դյուրին: Մասնագետների առումով թերացումներ ունենք տարբեր բնագավառներում: Իրավաբանական ֆակուլտետ ավարտածը կամ բժշկական համալսարանի շրջանավարտը մի՞թե չի թերանում իր պարտականությունները կատարելիս: Հարցին՝ մանկավարժն իրականում մանկավարժ չէ, իսկ իրավաբանն այսօր իրավաբա՞ն է, Ա. Բախշյանը պատասխանեց. «Իսկ մեր պետությունը պետությո՞ւն է»: Ինչպիսին մեր հասարակությունն է, այնպիսին էլ կրթությունն ու մանկավարժն են: Մանկավարժին կամ աշակերտին մեղադրելու, առհասարակ, մեղավորներ փնտրելու փոխարեն, լավ կլինի մտածենք, որ կայուն հասարակության համար պատասխանատու ենք յուրաքանչյուրս:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Գիտաժողով Բեյրութում՝ Հաճընի հերոսամարտի 90-ամյակին նվիրված

Բեյրութի Հայկազյան համալսարանում օրերս տեղի է ունեցել Հաճընի հերոսամարտի 90-ամյակին նվիրված գիտաժողով: Ըստ «Արմենպրեսի»՝ գիտաժողովի բացման օրը բարի գալուստի խոսքով հանդես է եկել Հաճընի հայրենակցական միության ատենապետ **Փոլ Յաղուբյանը**: Հաճընի վերջին քաղաքապետի թոռը՝ Ժերար Շալյանը, անդրադարձել է Հաճընի պատմությանը եւ հերոսամարտին: Լիբանանում Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարյանը կարեւորել է գիտաժողովը հայ ժողովրդի դժվարին եւ հերոսական պատմությունը վերհիշելու, վերաիմաստավորելու տեսանկյունից: Հայկազյան ցուցասրահում նաեւ ցուցադրվել են Հաճընի պատմական նկարները: Գիտաժողովի շրջանակներում անցկացվել են դասախոսություններ եւ քննարկումներ «Հաճընի 1915 թվականի բռնագաղթը», «Հաճընը եւ իր հեղափոխական ոգին» եւ այլ թեմաներով: Բեյրութի Հաճըն թաղամասում կազմակերպվել է ավանդական մատաղօրհնեք եւ տոնական համերգ: Միջոցառումներին մասնակցել են քաղաքական գործիչներ, պատմաբաններ եւ հյուրեր արտասահմանից:

**Ի. Պ.**

ՏԵՍԱԿԷՏ

# «Աթոռակից պատրիարքի ընտրությունը Երուսաղեմում դարձել է անհրաժեշտություն»

**Նոյեմբերի 8-10 Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանությունում (միաբանության կազմում կա 38 հոգեւորական) տեղի կունենա միաբանների ընդհանուր ժողով, որի նպատակն է քննարկել պատրիարքարանի օրակարգում ծառացած մի շարք խնդիրներ: «Նոր Երուսաղեմ» պարբերականի խմբագիր Նահապետ Մելքոնյանի (ԱՄՆ) փոխանցմամբ՝ այսօր պատրիարքարանը անդամալույծ վիճակում է գտնվում, տնտեսական ծանր վիճակին զուգահեռ բացակայում է նաեւ հոգեւոր կյանքը: «Վարդապետներ կան, որ ամիսներով պատարագ չեն մատուցում»:**

**Երկու տարի առաջ վանքի հաշվապահական գրասենյակից գողություն է կատարվել, սակայն մինչ այսօր գողերին չեն հայտնաբերել: Մելքոնյանը համոզված է. նրանք վանքի ներքին գողերն են: Մեծագույն խնդիր է նաեւ կառավարումը: «Պատրիարքարանը կալվածքներից տարեկան ստանում է 3.5 միլիոն դոլար, մինչդեռ ճիշտ կառավարման արդյունքում եկամուտը կկրկնապատկվեր», ասում է նա:**

**«Վարդապետներն էլ համաձայն են, որ հարցը միայնակ չեն կարող լուծել եւ աշխարհիկ կյանքի, հասարակության օգնության կարիքն են զգում»:**

**«Նոր Երուսաղեմ» պարբերականի խմբագիրը պատմում է, որ պատրիարքարանի շուրջը ստեղծված խնդիրներին տեղյակ է նաեւ Վեհափառը: «Սակայն մտահոգությունն առանց նախաձեռնության ոչինչ չարժե»:**

**Մելքոնյանի փոխանցմամբ՝ պետք է հասկանանք, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել 50 տարի անց Երուսաղեմի հայկական համայնքը, եւ եթե ցանկանում ենք, որ շարունակի գոյատեւել, ապա աթոռակից պատրիարքի ընտրության անցկացումն անհրաժեշտություն է: Եթե նման ընտրություն անցկացվի՝ երկու թեկնածուի անուն արդեն հայտնի է՝ Խաժակ արք. Պարսամյան եւ լուսարարապետ Նուրհան արք. Մանուկյան: Մելքոնյանը նշում է, որ իրավիճակը Երուսաղեմում լուրջ է: Օրակարգային է նաեւ Հայոց լեզվի պահպանման հարցը: «Արաբախոսությունը շատ է զարգացել: Հատկապես երիտասարդությունը նախընտրում է արաբերենը», ասաց:**



ՖՈՏՈԼՈՒՐ

**Պատրիարքարանի խնդիրների հիմքը Մելքոնյանը համարում է պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի գործունեությունը: Պատրիարքն արդեն 92 տարեկան է եւ դժվարությամբ է կառավարում: Պատրիարքարանի փոխանորդ միաբանության լուսարարապետ Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի նշանակումն էլ իրավիճակը չմեղմացրեց, որովհետեւ առկա էր իրավասությունների սահմանափակում, անհասկացողություն եւ միաբանական ներքին հարցեր:**

**Պատրիարքարանի վերջնական փլուզումը կանխելու նպատակով անհրաժեշտ է հանրության միջամտությունը:**

**Երուսաղեմում հայ համայնքի խնդիրները լուծելու առումով ամենաճիշտ տարբերակներից մեկը այնտեղ դեսպանատան բացումն է:**

**Մելքոնյանը նշում է, որ վերջերս հանդիպել է ԱԳՆ համապատասխան վարչության ղեկավարի հետ, որը փաստել է, թե Երուսաղեմում դեսպանություն բացելու հարցը օրակարգային է, սակայն կան խնդիրներ, որոնց պատճառով այն ձգձգվում է:**

**Հ. Հ.**

# Ո՞վ է ավելի հանցավոր՝ ՀՀՇ-ն, թե ՀՀԿ-ն

ՀՀՇ անդամ **Հովհաննես Իգիթյանը** խոստանում է, որ առաջիկա մի քանի տարվա ընթացքում Հայաստանում բոլոր եղանակներն էլ թեժ են լինելու: Ընդդիմադիր գործիչը դա պայմանավորում է ընդդիմության գործունեությամբ ու նաեւ այն փաստով, որ Հայաստանը հայտնվել է ծանր վիճակում, բացակայում է քաղաքական պայքարի կուլտուրան:

Իգիթյանը նշում է, որ ընդդիմադիր շարժման ղեկավարը երկրում շարունակում է մնալ ՀԱԿ-ը, որովհետեւ գիտի, թե ում դեմ է պայքարում եւ ինչու: Չանդրադառնալով «ժառանգությանը»՝ Իգիթյանն ասաց, որ ՀՅԴ-ն մի հարցում է դեմ իշխանությանը, եւ եթե իշխանությունն այդ հարցը լուծի Դաշնակցության ցանկությամբ, ապա կշարունակեն իշխանության մաս կազմել:

Իգիթյանը հավելում է, որ ՀՀՇ-ում կան խելացի մարդիկ, ովքեր պայքարում են ոչ թե պաշտոնի, այլ գաղափարի համար: Իրեն օրինակ բերելով՝ հավելում է, որ գիտի, թե ում դիմի, ինչ անի՝ իշխանավոր դառնալու համար, բայց չի անում:

ՀՀԿ-ական **Մանվել Բադեյանն** էլ չի հավատում, որ ընդդիմության համար իշխանության գալը գերխնդիր չէ: «Շարժումը պաշտոնապես հայտարարել է իշխանության գալու փաստի մասին»: Նա ՀԱԿ-ին ձեւավորված քաղաքական ուժ չի համարում եւ համոզված է՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի բացակայության ժամանակ ՀԱԿ-ը կփլուզվի, այնպես, ինչպես ՀՀՇ-ն, երբ ՀՀ առաջին նախագահը պասիվություն էր ցուցաբերում: Բադեյանը հավելում է, որ հասարակությունը պառակտված է, հետեւաբար լավագույն տարբերակը երկխոսության ճանապարհն է: ԼՂ կարգավորման հարցում չեն կարող միակարծիք լինել ՀՀՇ-ի հետ, սակայն այլ խնդիրներում կարող են համագործակցել:

«ՀՀՇ-ն չէր կարող ծախել Ղարաբաղը, որովհետեւ նրա իշխանության ժամանակ բանակցային սեղանին կար նաեւ ԼՂՀ-ն: Այսօր ոչ միայն ԼՂՀ-ի այլեւ Հայաստանի կարծիքը հաշվի չեն առնում: ՀՀՇ-ին կարող եք շատ բաներում մեղադրել, սակայն մինչեւ 1998թ. ԼՂՀ-ն ամենաբարձր մակարդակով ընդգրկված էր բանակցություններին: Ո՞վ է ներկայացնում Ղարաբաղն այսօր», հարցրեց Իգիթյանը: «Դուռակ, սամ դուռակ» մակարդակի եկեք չիջնենք», առաջարկեց Բադեյանը՝ հավելելով, որ ՀՀՇ-ն իշխանությունից հեռացավ, որովհետեւ ժողովուրդը չընդունեց ԼՂ հարցում նրա դիրքորոշումը:

Անդրադառնալով կոռուպցիային՝ Իգիթյանն ասաց, որ ՀՀՇ իշխանության օրոք կար կրիմինալի եւ իշխանության սերտաճում: «Այն ժամանակ կրիմինալը պետք է ծանոթ նախարար ունենար՝ հարցերը լուծելու համար, այսօր պատկերը փոխվել է, որովհետեւ կրիմինալը դարձել է իշխանություն»: Նրա բնորոշմամբ հիմքը ոչ թե ՀՀՇ-ն է այլ 2008-ի նախագահական ընտրությունները, որոնց ժամանակ իրենց դերն ունեցան կրիմինալ աշխարհն ու բանակը:

«Իշխանությունը հանցավոր է», ասաց Իգիթյանը:

«Դա ծիծաղելի է, ակնհայտ հանցագործներ կային ՀՀՇ-ում, որ ոտքից գլուխ կոռումպացված էին», հիշեց Բադեյանը:

«Այդ հանցագործներն այսօր էլ կան, ուղղակի նրանք ձեր թիմում են», շարունակեց Իգիթյանը՝ հավելելով, որ Բադեյանը ՀՀՇ-ի իշխանության տարիներին կարողացավ դառնալ բիզնեսմեն: «Դե թող հիմա էլ դառնան բիզնեսմեն, կարո՞ղ են: Նրան կամ երկրից դուրս կշպրտեն կամ էլ կվերացնեն», հավելեց Իգիթյանը:

«Դուք չլինեիք, ձեզ նման հարյուր հատ լինեին, մեկ է՝ բիզնեսով էի զբաղվելու», ասաց Բադեյանը՝ հավելելով, որ այն ժամանակ էլ պետք է ՀՀՇ-ի «դոբրոն» ստանային բիզնես ծավալելու համար:

«Դու դաբրո ստացե՞լ ես», հետաքրքրվեց Իգիթյանը:

«ՀՀՇ-ն ո՞վ է, որ ինձ դաբրո տա: «Վորտեկի» եմ արել: Ես բացառություն եմ», ասաց Բադեյանը:

Հետագա բանավեճն էլ ընթացավ նույն մակարդակով: Երկխոսությունն այդպես էլ չստացվեց:

**Հ. Հ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրապարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ժողովրդավարությունը 20 տարի անց կամ ի՞նչ կունենանք, եթե այսպես շարունակվի

## «ԲԵՏԵԷՌ»-ությունն ու մարդու իրավունքները

Ժողովրդավարությունը բավականին ընդգրկուն հասկացություն է, որ իր ազդեցությունն ու բովանդակությունն է ձեռք բերում տարբեր առիթներով եւ տարբեր մակարդակներում: Երեւանում երեկ մեկնարկած Եվրոպայի խորհրդի «Հանուն ժողովրդավարության ապագայի» ֆորումը բավականին ներկայացուցչական էր, սակայն առավել պետք է լիներ:



Իսկ այդ լինելուն խանգարել էր փաստացի հենց ժողովրդավարությունը, որի դրսեւորումներից մեկն էլ Ֆրանսիայում ավիափոխադրումների ոլորտի գործադուլն էր: Հենց այդ գործադուլի պատճառով ֆորումի աշխատանքներին մասնակցելու հնարավորություն չունեցավ անգամ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Մեւլութ Չավուշօղլուն, որին թերեւս Հայաստանում բավականին սպասողներ կային:

Ֆորումը գումարվում է 2005 թվականի ԵԽ անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովի որոշման հիման վրա եւ համարվում է կազմակերպության կարեւորագույն ամենամյա միջոցառումներից: Համաժողովին մասնակցելու նպատակով Երեւան են ժամանել տարբեր երկրների եւ Եվրոխորհրդի բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առանց Չավուշօղլուի մեկնարկած ֆորումը ողջունող առաջին խոսքը Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանինն էր: Ֆորումի «Հեռանկարներ 2020. ժողովրդավարությունը Եվրոպայում. Սկզբունքներ եւ մարտահրավերներ» խորագրով նիստին բացման խոսքում Նալբանդյանը նշեց, որ Հայաստանի, Շվեդիայի եւ Իսպանիայի համատեղ նախաձեռնությամբ Երեւանում Եվրոպայի խորհրդի հետ կազմակերպելով այս նշանակալի միջոցառումը՝ Հայաստանը իր ներդրումն է բերում համաեվրոպական ժողովրդավարական գործընթացների զարգացմանը:

Խոսելով Եվրոպայի խորհրդի ստեղծման նախադրյալների եւ կազմակերպության գործունեության մասին, Էդվարդ Նալբանդյանը նշեց, որ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ապագայի նկատմամբ պատասխանատվության զգացումն էր, որ մղեց ժամանակի առաջնորդներին լծվելու Եվրոպայում կայունության, զարգացման եւ խաղաղության ամուր հիմքերը դնելու այդքան անհրաժեշտ գործընթացին:

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի դերակատարությանը, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցությանը, Նալբանդյանը նշեց. «Շուտով մեր երկիրը կնշի Եվրոպայի խորհրդին անդամակցության 10-ամյակը... Հայաստանը շարունակում է իրականացնել իր պարտավորությունները՝ ընթանալով ժողովրդավարության, օրենքի գերակայության եւ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների վրա խարսխված հասարակության կառուցման ուղիով»:

«Մենք գնահատում ենք մեր բարեկամների ու գործընկերների աջակցությունը այդ ուղին հնարավորինս սահուն ու արդյունավետ անցնելու համար, քանի որ հնարավոր խոչընդոտները առավել հեշտ է հաղթահարել, երբ կա աջակցության ու զորակցության զգացումը», եզրափակեց նախարարը:

Բացման խոսք ասաց նաեւ Մակեդոնիայի նախկին հարավսլավական հանրապետության փոխարտգործնախարար Զորան Պետրովը, նաեւ ԵԽԽՎ փոխնախագահ Ջոն Պրեսկոտը: Իսկ Սերբիայի ԱԳ նախարար Վուկ Երեմիչը հարկ համարեց ընդգծել, որ Սերբիայի խորհրդարանն առաջին եվրոպականն էր, որ ողբերգական իրադարձությունների համար ներողություն խնդրեց: Ավելին, Սերբիան ժողովրդավարության օրինակ է, եւ, ըստ Երեմիչի, ժողովրդավարությունն ու երկխոսությունը բարձր դասող մի երկիր:

Որեւէ կասկած չարտահայտելով Սերբիայում ժողովրդավարության մակարդակի առնչությամբ, այդուհանդերձ, Կոսովոյի հարցում սերբական մոտեցումը համատեքստում նկատի ունեցող Երեմիչը թերեւս չափազանցում էր, քանի որ Կոսովոյի հարցում Սերբիային այլ բան, քան «ժողովրդավար» լինել, չի մնացել:

# Գռեհիկ եւ ոչ գռեհիկ «անհամաձայնները»




Ըստ էության, «Հանուն ժողովրդավարության ապագայի» ֆորումի ներսում հնչող այն մտքին, թե Հայաստանը շարունակում է կատարել իր պարտավորությունները՝ ընթանալով ժողովրդավարության ուղով, համաձայն չէին ֆորումի պատերից դուրս՝ Մաշտոցի պողոտայի վրա հավաքված այն մարդիկ, որոնք «Լեւոն, նախագահ» էին գոռում՝ կրելով տարբեր գրություններով պաստառներ:

Հասկանալի է, որ սա եւս ժողովրդավարության դրսեւորում է, երբ Եվրոպայի խորհրդի մակարդակով անցկացվող նման միջոցառումը դրսում զուգորդվում էր նման հայտարարություններով եւ պիկետով: Սակայն այն մի քանի գռեհիկ «անհամաձայնները», որ հարձակվեցին ֆորումից դուրս եկած մի քանի լրագրողներիս վրա, ենթադրել են տալիս, որ «բետեէռ» կանանց ժամանակները դեռ չեն անցել:

Չեն անցել նաեւ գռեհիկ տհասների ժամանակները, երբ իրապես իրենց իրավունքները հարգված տեսնելու պահանջ ներկայացնող մարդկանց կողքին հայտնվում են դաստիարակության եւ մտավոր կարողությունների զարգացման ցածրագույն մակարդակ ունեցողներ, որոնք սեփական ապուշության արտահայտման այլ ձեւ չեն գտնում, քան կանգնել ինչ-որ պահանջներ ներկայացնողների կողքին, չգիտես որտեղից գտած սուլիչներով ու ամենայն լկտիությամբ արձագանքել մարդկանց, որոնք, նվազագույնը, նման վերաբերմունքի առիթ չեն տվել, եթե չասենք, որ որեւէ առնչություն չունեն:

Մի կողմ թողնելով այն հարցը, թե ինչ կապ ունեն Եվրոպայի խորհրդի ֆորումն ու «Լեւոն, նախագահ» բարձրաձայնումները, դա, ի վերջո, ազատ արտահայտվելու մի դրսեւորում կարելի է համարել կամ երբեմն առկայծող այն շարժման, որ սկսվեց 2008-ի մարտի 1-ից հետո:

Ամեն դեպքում, նույն այդ պիկետավորները պետք է որ հստակ գիտակցեն, որ այնպիսի կանանց առկայությունն իրենց շարքերում, որոնք արհամարհանքից ավելին չեն ներշնչում, էլ չասեմ վիրավորանք ու զայրույթ, վարկաբեկում են այն ամենը, ինչի համար երեկվա պիկետի յուրաքանչյուր մասնակից հարկ էր համարել հասնել Մաշտոցի պողոտա ու հայտարարություն անել:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՄԱՏՆԱՆՇՈՒՄ Է ՎԱՐՉԱՊԵՏԸ

# Որո՞նք են կառավարության 2011-ի թիրախային նպատակները

## Եվ որո՞նք պետք է ընդգրկվեին, բայց բացակայում են

*1-ին էջից*

**Հաջորդ թիրախը, որը նշել է վարչապետը, զբոսաշրջության զարգացումը, որը մասնավորապես իրականացվելու է Սյունիքի մարզում: Նա հիշատակել է օրերս գործարկված Տաթեւի ճոպանուղին, որպես այդ տարածաշրջանի զբոսաշրջության զարգացման համալիր բիզնես ծրագրի առաջին քայլ եւ տեղեկացրել, որ հաջորդ փուլը լինելու է Ջերմուկի ծրագիրը:**

**Զարգացման հայկական գործակալության (ԶՀԳ) մշակած 23 ծրագրերը նույնպես ուղղված են լինելու տնտեսության դիվերսիֆիկացմանը: Դրանիցից Տիգրան Սարգսյանն առանձնացրել է չինական կողմի հետ համատեղ իրականացվելիք բազալտի վերամշակման եւ ԱՄՆ դրամաշնորհով՝ այրվող թերթաքարի ձեռնարկությունների ստեղծումը: Եթե այս ծրագրերն իրագործվեն, ապա հասկանալի է, որ դրական կազդեն տնտեսության դիվերսիֆիկացման առումով: Սակայն գործակալության երկար տարիների գործունեության գործնական արդյունքների բացակայությունը որոշակի վերապահումների տեղիք է տալիս այդ ծրագրերի իրատեսական լինելու առնչությամբ: Բավական է միայն հիշատակել ընդամենը երեք-չորս ամիս առաջ ԶՀԳ կողմից ազդարարվող «Սիս, Մասիս եւ նոր Հայաստան» մի քանի հարյուր միլիոն դոլարանոց ծրագիրը Եղվարդի ջրամբարի շրջակայքում հանգստավայր ստեղծելու մասին եւ հաջորդած լռությունը դրա հետագա ճակատագրի վերաբերյալ:**

**Վերադառնանք սակայն իրական հատվածի խրախուսմանն ուղղված վերեւում նշված մյուս ծրագրերին: Միանշանակ է, որ մասնավորապես գյուղմթերքների վերամշակման եւ սննդարդյունաբերության զարգացման ուղղությամբ իրականացվող միջոցառումները ավելի ճկուն կդարձնեն մեր տնտեսության կառուցվածքը, կնպաստեն եւ գյուղատնտեսության, եւ արդյունաբերության զարգացմանը հատկապես Երեւանից դուրս: Սա կարեւոր է նաեւ տարածքային համաչափ զարգացման առումով: Նույնը կարելի է ասել նաեւ Սյունիքի մարզի զբոսաշրջության զարգացման համար, որը կնպաստի մեր երկրի հարավի զարգացմանը:**

**Սակայն երբ վարչապետը խոսեց կառավարության ինդուստրիալ քաղաքականության մասին, սպասումներն այնպիսին էին, որ նա նախեւառաջ կկարեւորի մեր երկրի բնական հարստությունների եւ ձեւավորված կառուցվածքի հիման վրա եղած արդյունաբերական հզորությունների զարգացումը: Խոսքը երեք-չորս տարի առաջ հռչակված հանքարդյունաբերության որակական զարգացման, հանքարդյունաբերության եւ քիմիական արդյունաբերության կլաստերի ստեղծման՝ պղնձի հանքաքարի փոխարեն մաքուր պղնձի ձուլման, այդ նպատակով պղնձաձուլարանի կառուցման, պղնձի հումքից վերջնական արտադրանքի ստացման՝ այդ թվում քիմիական ձեռնարկությունների հնարավորությունները օգտագործելով, եւ ապա նոր ստացված արդյունքի արտահանման մասին է: Եթե մոլիբդենը գոնե մշակվում է եւ դառնալով ֆեռոմոլիբդեն արտահանվում անհամեմատ բարձր գնով, ապա մեր պղնձարդյունաբերական կոմբինատները դեռ շարունակում են արտահանել պղնձի որոշ պարունակություն ունեցող հանքանյութը միայն:**

**Հրատապ է նաեւ քիմիական այն հզորությունների արդյունավետ օգտագործումը, որոնք պահպանվել են խորհրդային ժամանակներից: Իհարկե «Պոլիվինիլացետատն» ու «Քիմռեակտիվների գործարանը» վերականգնել արդեն անհնար է եւ կարիքն էլ չկա, բայց «Նաիրիտի» եւ «Վանաձոր-քիմպրոմի» համար, ի վերջո, պետք է գտնել արդյունավետ գործելու տարբերակներ: Այդ դեպքում ոչ միայն տնտեսության դիվերսիֆիկացման աստիճանը էապես կբարձրանա, այլեւ երկրի արդյունաբերական հզորությունը, ինչպես նաեւ կբարելավվի սոցիալական կացությունը, քանի որ այս ձեռնարկությունները մեծաքանակ աշխատատեղեր են ապահովում:**

**Հաջորդ տարվա թիրախներից վարչապետը մասնանշել էր նաեւ հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ ձեռնարկվող եւ նախատեսված քայլերը, որոնց, սակայն, նախկինում անդրադարձել ենք եւ դեռ առիթ կունենանք անդրադառնալու առաջիկայում:**

# «Յունիբանկ»-ի հեռախոսակապի կենտրոնը սկսել է հաճախորդների սպասարկումը նոր՝ 59 55 55 հեռախոսահամարով

«Յունիբանկ»-ի թեժ գծի կենտրոնը բազմաֆունկցիոնալ հեռախոսակապի կենտրոնի վերակազմավորելու հետ կապված, իրականացվել է հեռախոսահամարի փոփոխություն: Այսուհետ թեժ գծի նախկին՝ 85 80 համարով ստացված բոլոր հեռախոսազանգերը կվերահասցեագրվեն հեռախոսակապի կենտրոնի նոր՝ 59 55 55 համարին:

Հեռախոսակապի կենտրոնի հնարավորությունների եւ գործառույթների ընդլայնումը պայմանավորված է զանգերի քանակի նշանակալի աճով եւ համահունչ է մանրածախ բանկային բիզնեսի ակտիվ զարգացման Բանկի ռազմավարությանը: Հեռախոսակապի կենտրոնի տեխնիկական նորացումը հնարավորություն է տալիս էապես կրճատել զանգերի մշակման ժամանակը եւ ապահովել հաճախորդների ավելի բարդ հարցումների սպասարկումը: Օրինակ, հեռախոսակապի կենտրոն կատարած զանգով կարելի է լրացնել վարկային քարտի հայտը: Մոտ ապագայում հաճախորդներին հնարավորություն կընձեռվի օգտվել լրացուցիչ ծառայություններից:

Հեռախոսակապի կենտրոնի բոլոր աշխատակիցները մասնակցել են մասնագիտական դասընթացներին, ինչը բավականին բարձրացրել է կենտրոնի աշխատանքի արդյունավետությունը: Զանգահարելով 59 55 55 հեռախոսահամարով կարելի է ստանալ ոչ միայն նախնական տեղեկատվություն եւ որակավորված խորհրդատվություն «Յունիբանկ»-ի ծառայությունների վերաբերյալ, այլ նաեւ առաջարկություն կամ բողոք ներկայացնել Բանկի գործունեության վերաբերյալ:

Հեռախոսակապի կենտրոնը աշխատում է երկուշաբթի- ուրբաթ ժամը 9:00-ից մինչեւ 18:00-ն: Զանգահարեք եւ հարցրեք՝ մենք միշտ ուրախ ենք լսել մեր հաճախորդներին:

# Ադրբեջանահայերը Միացյալ Նահանգներում

*1990-ականների սկզբներին հարյուր հազարավոր հայեր լքեցին Ադրբեջանը: Ադրբեջանում բռնությունների ու վայրագությունների սաստկացումը հայերի դեմ գագաթնակետին հասավ 1988-ի փետրվարին Սումգայիթում, նույն տարվա նոյեմբերին Կիրովաբադում (Գյանջայում) եւ 1990-ի հունվարին Բաքվում սանձազերծված ջարդերի տեսքով: Արդեն մոտ 20 տարի է, որ այդ վայրերից մազապուրծ հայ ընտանիքներ հաստատվել են Միացյալ Նահանգներում: Ստորեւ թարգմանաբար «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի սեպտեմբերի 4-ի եւ 11-ի համարներից հատվածաբար ներկայացվող թերթի մշտական աշխատակիցներից **Արամ Արքունի** հոդվածը փորձ է քննարկելու, թե ինչպես է ներգաղթյալների այդ յուրահատուկ խումբը հարմարվել նոր աշխարհի նոր պայմաններին: Հեղինակը չի հավակնում գիտական վերլուծություն կատարելու: Նա պարզապես համայնքի ակտիվ ու գործունյա անդամների հետ ունեցած հարցազրույցների հիման վրա ներկայացնում է ադրբեջանահայերի ընդհանուր պատկերը Միացյալ Նահանգներում:*

Ադրբեջանահայերի մեծ մասը Ամերիկա ներգաղթեց 1989-1996 թվերին: Առաջին խմբաքանակը հասավ, երբ ամերիկյան կառավարությունը համաձայնեց նրանց շնորհել փախստականի կարգավիճակ: Դրանից առաջ շատ դժվար էր խորհրդային հայաստանցիների համար (բացի արտասահմանից ներգաղթածներից ու այլախոհներից) արտագաղթել Խորհրդային Միությունից: Ամերիկայում նրանք հաստատվեցին գրեթե բոլոր նահանգներում, նույնիսկ այնպիսի ոչ հայաշատ քաղաքներում, ինչպիսին Ֆարգոն եւ Բոյզին էին՝ համապատասխանաբար Հյուսիսային Դակոտայում եւ Այդահոյում: 1994-ին յոթ ընտանիքներ ուղարկել էին նաեւ Ալյասկա: Ամերիկայի Հայկական եկեղեցու արեւելյան թեմի սոցիալական ծառայությունների բաժնի վարիչ (1992-1997 թթ.) **Մայլք Գուլիելմոն** հիշում է, որ մի մեծահասակ կին Այդահոյից հաճախակի զանգում էր նրան բողոքելու, որ Մոսկվայի եւ Բաքվի նման մեծ քաղաքներում ապրելուց հետո այժմ գավառային մի ավանում առավոտները արթնանում էր եւ ոչխարներ տեսնում իր շուրջը: Նա մեծապես հուսալքված վիճակում էր:

Ամենամեծ խմբերը հաստատվեցին Բրուքլինում եւ Նյու Յորքի հարակից շրջաններում: Որոշ մասն էլ մեկնեց Լոս Անջելես եւ Նյու Ինգլենդի տարածքները: Ադրբեջանահայերին վիզաներ տվող կոնգրեսական այս ծրագիրը ավարտվեց 1994-ին, որից հետո խիստ դժվարացան Ամերիկա ներգաղթելու գործընթացները:

Արժանահավատ տվյալներ չկան, թե ադրբեջանահայերից քանիսն են այժմ ապրում Մ. Նահանգներում: Հոդվածի առիթով երեք տարբեր պետական հիմնարկներ դիմեցինք, բայց նրանցից ոչ մեկը ստույգ տեղեկություններ տրամադրել չկարողացավ: Նույնը կարելի է ասել ամերիկահայկական կազմակերպությունների մասին: Առանձին ադրբեջանահայեր 10-100 հազար են նշում: Չմոռանանք, որ մոտ 400 հազար հայեր էին ապրում 1989-ին Ադրբեջանում (որոնցից 150 հազարը՝ Լեռնային Ղարաբաղում), եւ շատերը նրանցից Հայաստան եւ Ռուսաստան գաղթեցին:

Ըստ Գուլիելմոյի, տարբեր ձեւերով են նրանք մուտք գործել Մ. Նահանգներ: Քաղաքականությամբ զբաղվողները զբոսաշրջության վիզաներով են հասել եւ Ամերիկայում քաղաքական ապաստան են հայցել: Մեծամասնությունը, սակայն, որպես փախստական ճանաչվել է նախքան Մ. Նահանգներ ժամանելը: Մ. Նահանգների կառավարությունը համագործակցել է ոչ շահութաբեր մի շարք կազմակերպությունների հետ (մեծ մասամբ կրոնական, ինչպիսիք են, օրինակ, կաթոլիկական, լյութերական եւ եկեղեցական համաշխարհային ծառայությունը), որոնք էլ որոշել են՝ ում թույլատրեն եւ որտեղ տեղավորեն:

Ըստ իննունականներին տեղավորման գործերով զբաղվող **Աննա Բաղդասարյանի,** որն այժմ աշխատում է «Փախստականների եւ ներգաղթի միջդավանական ծառայությունում», Լոս Անջելեսում եկեղեցական համաշխարհային ծառայությունում գործընթացը հետեւյալ ձեւով էր կազմակերպված. նրանք տարեկան 800-900 հոգի էին բերում Մ. Նահանգներ Աֆրիկայից, Իրանից եւ Ադրբեջանից: «Հայերի մեջ կային հոգեգալստականներ եւ առաքելական եկեղեցու (հայկական) պատկանողներ: Ազգականները պետք է օդանավակայանում դիմավորեին նրանց, բնակարան գտնեին նրանց համար, իսկ մենք պարտավոր էինք զբաղվել մնացյալ հարցերով՝ կահույք տրամադրել, առողջապահական հետազոտություններ անցկացնել, սոցիալական ապահովության քարտեր տրամադրել եւ աշխատանքի տեղավորել: Եթե աշխատանք չէին գտնում, միայնակները «բարեկեցության» նպաստ էին ստանում ինը ամիս շարունակ, իսկ ընտանիք ունեցողները՝ մի քանի տարի: Հետո ամեն ամիս այցելում էինք տեսնելու, թե ուրիշ ինչ կարիքներ ունեն»:

Իսկ քաղաքացի դառնալուց հետո բոլորն իրենց կյանքով էին ապրում: Հայկական եկեղեցական թեմերի սոցիալական ծառայությունների բաժինները գլխավոր մարմիններն էին, որոնք օժանդակում էին նորեկներին սնունդ եւ հագուստեղեն մատակարարելով նրանց, մինչ նյութական օգնություն ստանում էին հիմնականում իրենց ազգականներից: Ամերիկահայերից շատերն այդ ժամանակ այն կարծիքին էին, որ նրանք ավելի ճիշտ կվարվեին, եթե Հայաստան տեղափոխվեին, բայց քանի որ այնտեղ ոչ լույս կար, ոչ ջեռուցում այդ տարիներին, ըմբռնումով էին մոտենում բռնարարքներ տեսած այդ մարդկանց:

Գուլիելմոյի փոխանցմամբ, երբեմն «նրանք, հատկապես խառն ամուսնությունների (հրեաների կամ ռուսների հետ) պարագաներում, հիմար կացության առաջ էին կանգնում, քանի որ մինչեւ 1989 թիվը կրոնական պատկանելություն չունեին, իսկ այստեղ դա անհրաժեշտություն էր, կարեւոր ազդակ: Հրեական նախնիներ ունեցողների կամ կոտորածներից անմիջական վիրավորվածների համար ավելի հեշտ էր ապաստան ստանալը: Հայաստանյայց եկեղեցական թեմը փաստաբանների մի խումբ էր հավաքագրել, որն օգնում էր ներգաղթողներին: Օգնում էին նաեւ հրեական եւ մարդու իրավունքների կազմակերպություններից առանձին փաստաբաններ: Սակայն կային այնպիսիք, որոնք ոչ մի փաստաթուղթ չունեին: Նրանք մնացին «անօրինականների» շարքերում կամ էլ ամուսնացան ամերիկյան քաղաքացիություն ունեցող անձանց հետ եւ օրինականացրին իրենց Ամերիկայում գտնվելը»:

Ներգաղթողներն իրենք էլ փորձեցին կազմակերպվել միմյանց օգնելու նպատակով: Գուլիելմոյի եւ տեղի հայկական եկեղեցու հոգեւորականների ջանքերով Ռոուդ Այլենդում, օրինակ, նրանք ստեղծեցին «փախստականների սոցիալ-տնտեսական զարգացման ասոցիացիան», որի հիմնադիրներից **Կարեն Բաղդասարյանն** այսպես է բացատրում նրա գործունեությունը. «Հիմնական նպատակը Կոնգրեսում ոչ շահութաբեր մի կազմակերպության ներկայացուցիչը ունենալն էր, որ հանդես կգար մեր անունից եւ կպաշտպաներ մեր շահերը: Ամեն տարի որոշակի խմբեր քաղաքացիություն ստանալու առաջնահերթություն են ստանում, եւ անհրաժեշտ էր բացատրել, թե ո՞ր ազգություններն են ո՞ր երկրում վտանգված»:

Կոլորադոյում ռուս-հրեաների անունից քարոզարշավ տանող մի կազմակերպություն ցանկություն հայտնել էր օգնել հայ փախստականներին 30 հազար դոլարի դիմաց: Բայց ադրբեջանահայերը չէին կարողացել այդքան գումար հավաքել, որովհետեւ ամերիկահայերը չէին մասնակցել դրան՝ պատճառաբանելով, թե նրանք պետք է Հայաստան մեկնեին, ոչ թե ԱՄՆ:

Ադրբեջանահայերին փախստականի առաջնահերթություն տվող կոնգրեսական ծրագիրը դադարեց 1990-ականների կեսերին, եւ չնայած ստեղծված կազմակերպությունը դեռ գոյություն ունի, գործում է միայն Ռոուդ Այլենդում եւ լավագույն դեպքում օգնում կարիքավոր ընտանիքների հոգսերը թեթեւացնելու:

## Բրուքլինի եւ Նյու Յորքի Մետրոպոլիտեն տարածքներ

Ադրբեջանահայերի խոշորագույն համայնքներից մեկն այստեղ է տեղավորված: Մանհեթենի Սբ Վարդան հայկական եկեղեցու ավագ քահանա հայր **Մարտիրոս Ջեյանի** գնահատմամբ, Նյու Յորք քաղաքում եւ Նյու Ջերսիում ադրբեջանահայերի թիվը մի քանի հազարի է հասնում: Սբ Գրիգոր Լուսավորիչ առաքելության ծխական խորհրդի նախագահ դոկտ. **Սվետլանա Ամիրխանյանի** համոզմամբ՝ հնարավոր չէ ճշգրտել իրական թիվը: Ծխի փոստային ցուցակում գրանցված են մոտ 400 ընտանիքներ, բայց հստակ չէ, թե նրանցում քանիսն են ադրբեջանահայեր: «Մեծամասնությունը սկզբնական շրջանում Բրուքլինում էր, հետո մի մասը տեղափոխվեց Մանհեթեն, Բրոնքս, Քուինզ եւ Նյու Ջերսի»: Ըստ այդ նույն խորհրդի գանձապահի՝ **Անժելա Ղազարյանի**՝ նրանց թիվը մոտ 5 հազար է:

Բրուքլինի առաքելության ծխական խորհրդի փոխնախագահ եւ դպրոցի տնօրենուհի **Մարիա Բաղդասարովայի** փոխանցմամբ, փախստականների առաջին հոսքը նախ Իրան, Սիրիա, Լիբանան, Հունաստան եւ նույնիսկ Արգենտինա տեղափոխվելուց հետո է Մ. Նահանգներ եկել իրենց ազգականների կամ ծանոթների օգնության շնորհիվ: Երկրորդ՝ առավել մեծ հոսքը 1993-94 թվերին է եկել, իսկ ամենամեծ խումբը՝ 1995-ի գարնանը՝ արդեն կառավարական մակարդակով:

Փախստականները հիմնականում Բաքվից, Սումգայիթից եւ Կիրովաբադից էին: Սկզբնական շրջանում լյութերական եւ այլ քրիստոնեական եկեղեցիներ օգնեցին նրանց, բայց երբ նրանց թիվը մեծացավ, դժվար էր հասնել բոլորին: «Նրանք գրեթե ոչնչից պետք է սկսեին: Ես ինքս ընդամենը 100 դոլար ունեի գրպանում, երբ եկա», պատմում է Բաղդասարովան:

Հայր **Ջեյանը** հավաստում է, որ փախստականները առաջին հերթին եկեղեցական թեմի հետ են կապ հաստատել, քանի որ թեմը ավելի հանդուրժողական է գտնվել իրենց հայերեն չխոսելու հանդեպ: Այդ ժամանակ Բրուքլինում հայկական եկեղեցի չի եղել: Միայն 2000 թվին, երբ **Անանիա արքեպիսկոպոս Արաբաջյանն** է Մ. Նահանգներ տեղափոխվել, իր ուժերն ու եռանդը նվիրել է նրանց ծառայելուն եւ սկսել Բրուքլինում ամիսը մեկ սուրբ պատարագ մատուցել վարձով տրված օտար մի եկեղեցում: Այնուհետեւ սկսել է գործել նաեւ շաբաթօրյա դպրոցը: Արաբաջյանը նաեւ այցելել է այլ վայրեր, այդ թվում՝ Հարթֆորդ (Կոնեկտիկուտ), Ֆիլադելֆիա, Նեշվիլ (Թենեսի), Փրովիդենս (Ռոուդ Այլենդ), Շարլոտ (Հյուսիսային Կարոլինա), Գրինֆիլդ եւ Լենսինգ (Միչիգան), Էրի (Փենսիլվանիա), Կոլումբոս (Օհայո), Սիրակուս (Նյու Յորք), Ռիչմոնդ (Վիրջինիա), Քանզաս (Միսուրի) եւ Ջեկսոնվիլ (Ֆլորիդա) հետաքրքրվելու համար փախստականների հարցերով: Ռուսալեզու հայերին գրավելու եւ եկեղեցուն կապելու նպատակով նա նույնիսկ սկսել է հրատարակել «Վերա, նադեժդա, լյուբով» (Հավատ, հույս, սեր) խորագրով մի պարբերական, որի մի քանի էջերը արեւելահայերեն են եղել, մյուսները՝ ռուսերեն: Պարբերականի դադարումից հետո նա ռուսերենի է թարգմանել հայոց եկեղեցվո պարբերականը եւ զանազան աղոթագրքույկներ: Նրա՝ ռուսերենի թարգմանած սուրբ պատարագը լույս է տեսել 2002-ին:

Ներկայումս ժամանակ առ ժամանակ Բրուքլին է այցելում հայր Ջեյանը: 1995-ին հիմնված հայկական դպրոցը մնում է գլխավոր օջախը՝ մայրենիի ծանոթության: 2001-ին մի քանի աշակերտ ունեցող դպրոցը այսօր 40-50 աշակերտ ունի: Սովորեցնում են հայերեն լեզու, պատմություն, կրոն, երգ ու պար: Ծնողների համար գործում են անգլերենի դասընթացներ: Դպրոցը գործում է կիրակի օրերը ժամը 12-ից մինչեւ 18-ը: Ունի 5 դասատու: Աշակերտները 2,5-14 տարեկան են: Դպրոցում հիմնականում հնչում է արեւելահայերենը: Բյուջեն գոյանում է զանազան միջոցառումների եւ նվիրատվությունների շնորհիվ: Ուսուցչական կազմը ընտանիքներին օգնում է նաեւ այլ հարցերում՝ կենցաղային, սոցիալական, ապահովագրական: Ադրբեջանահայերը մասնակցում են ռուսական եւ երբեմն էլ հրեական միջոցառումներին. բայց Նյու Յորքի ռուսալեզու աշխարհում նրանք Բրուքլինում ապրող ադրբեջանցիների ուժեղ ագրեսիվ քարոզչությանն են հանդիպում: Վերջիններս ռուսական հեռուստածրագրերով նյութեր են հեռարձակում, որտեղ «հայերին են ներկայացնում որպես ագրեսորների»: «Մենք այնքան էլ չենք կարողանում հակադարձել նրանց, քանի որ հեռուստաեթերը գնելը թանկ հաճույք է, մենք միջոցներ չունենք», բացատրում է Ամիրխանյանը եւ ավելացնում. «Բացի այն, որ նյութապես իրենք՝ փախստականներն էլ ապահովված չեն, նաեւ այն խորհրդային ժամանակների մտայնությունն է նրանց մեջ, որ պետությունը պետք է հոգա ամեն ինչ: Նրանք չեն հասկանում, որ այստեղ ամեն ինչ տարբեր է: Հետո տեսնում են նաեւ, որ հրեաները նման ծառայություններ ձրի են ստանում իրենց կենտրոններից, եւ ակնկալում են նույնը՝ մեր հայկական կազմակերպություններից կամ եկեղեցուց: Իհարկե, հիմնական մշակութային կենտրոն կամ թեկուզ փոքր մատուռ ունենալը մեծապես կբարելավեր նրանց վիճակը»:

## Հարթֆորդ, Կոնեկտիկուտ

ԱՄՆ-ի Արեւելյան ափում գտնվող Հարթֆորդում ադրբեջանահայերը հաստատվեցին հիմնականում 1990-ից 1995 թվերին՝ եկեղեցական համաշխարհային ծառայության եւ կաթոլիկական եկեղեցիների աջակցությամբ: Սկզբնական 30-40 ընտանիքներին հետագայում միացան ուրիշները: Ներկայումս մոտ 100 ընտանիքներ են ապրում, ըստ թեմի հասարակական հարաբերությունների համակարգող **Կարինե Աբալյանի**, Հարթֆորդում եւ մոտակա Նյու Բրիտեն շրջանում: Տեղացիները լավ են ընդունել նորեկներին, որոնց մեծ մասը քաղաքական ապաստան հայցողներ են եղել: Շուտ են մերվել նաեւ տեղի հայ համայնքի հետ, սկսել են եկեղեցի հաճախել, միջոցառումների մասնակցել եւ վերակենդանացնել համայնքը:

«Նրանք հասարակ մարդիկ էին: Գուցե շատ բան չգիտեին սուրբ երրորդության մասին, բայց գիտակցում էին որ Աստված գոյություն ունի: Ես նրանց հերոսներ կանվանեի, որովհետեւ կարողացել էին պահպանել իրենց հայկականությունը եւ հավատը մահմեդականների շրջապատում եւ փոխանցել այդ բոլորը իրենց զավակներին», նշում է **հայր Թադեւոս Աբդալյանը**՝ Հայաստանյայց թեմի առաքելական ծխերի բաժնի տնօրենը:

Կարինե Աբալյանը Բաքվից Հայաստան է տեղափոխվել 1988-ին, իսկ Մ. Նահանգներ գաղթել 1992-ին, կաթոլիկական եկեղեցու աջակցությամբ: Կաթոլիկները նաեւ նրան են աշխատանքով ապահովել: Նրա հավաստիացումներով՝ Հարթֆորդի Սբ Գեւորգ եկեղեցին համայնքը միավորող ամենամեծ կռվանն է: Օգնել է նորեկներին ոտքի կանգնելու, կատարել հագուստի հանգանակություններ եւ ոչ պաշտոնական ռուսերեն դասընթացներ կազմակերպել առաջին տարիներին, երեխաներին ընդգրկել արտասանության, երգի, պարի եւ թատրական խմբակներում: «Այդ պատճառով էլ մեծ մասը մնաց այդ տարածաշրջանում, չնայած ոմանք հետագայում տներ գնելով քաշվեցին արվարձանները», բացատրում է նա՝ ավելացնելով, որ չնայած որոշ երեխաներ նաեւ հայերեն լեզվի դասերի հետեւեցին, բայց «դժվար էր նրանց համար տիրապետել մայրենիին շաբաթական մեկանգամյա հանդիպումների միջոցով»:

## Կենտուկի եւ Թենեսի

Մ. Նահանգներ 1994-ի օգոստոսին ժամանած **Լիանա Ղազարյանը** նշում է, որ մոտ 200 հայեր էին ապրում Բոուլինգ Գրինում (Կենտուկի), որն ունի 68 հազար բնակչություն, սակայն այժմ 150-ն են մնացել, որովհետեւ երիտասարդների համար այստեղ անելու շատ բան չկա:

«Սկզբնական շրջանում լավ էր: Մեծ քաղաքների խառնաշփոթությունը չկար եւ փախստականների տեղավորման ծրագրում ներգրավված մարդիկ օգնում էին մեզ: Ես ինձ երբեք մեկուսացված չեմ զգացել, եթե Աստծո օգնությամբ ողջ ես մնացել, ապա շնորհակալ պետք է լինես դրա համար: Ժեստերի եւ նշանների լեզվով էինք հաղորդակցվում, բայց մարդիկ հայաստանցիների նման են, հարեւանների հանդիպումներ, ընտանեկան այցելություններ եւ այլն», պատմում է նա:

Մեծ մասն աշխատանքի տեղավորվել էր, չնայած ոչ իր մասնագիտության համապատասխան: Փախստականների մեջ ինժեներներ, բժիշկներ եւ ուսուցիչներ կային, որոնք պետք է կահույքի կամ քիմիական գործարաններում աշխատեին: «Կամ էլ շինարարության մեջ, ինչպես ամուսինս, ով ինժեներ լինելով, ամեն ինչ ծայրից սկսեց՝ աշխատելով ամառները մինչեւ 38 աստիճան տաքության պայմաններում», շարունակում է Ղազարյանը, որը ստիպված է եղել երեխաների խնամակալությամբ զբաղվել ծայրը ծայրին հասցնելու համար: Հետագայում ամուսինը կարողացել է իր անձնական գործը բացել:

Բոուլինգ Գրինն ընդամենը 45 րոպե է հեռու Նեշվիլից (Տենեսի)՝ տարածաշրջանի մեծ քաղաքից, որի սահմաններից մի փոքր դուրս է Ֆրենքլինը, որտեղ հայերն ունեն եկեղեցական ծուխ: Նեշվիլի տարածքում ապրում են մոտ 500-600 հայեր, որոնց թվում՝ առնվազն 40 ընտանիքներ Ադրբեջանից: Ղազարյանի փոխանցմամբ՝ ընտանիքները մի ձեռքի հինգ մատների նման են, իրար օգնում են, միասին հավաքվում, տարեդարձ կամ այլ առիթներ նշում»:

Հայերը Բաքվում այնքան էլ կրոնասեր չէին: «Ես նույնիսկ չգիտեի, որ հայերն առաջինն են ընդունել քրիստոնեությունը», խոստովանում է Ղազարյանը, «շատ բան ես երեխաներիցս սովորեցի»: Երեխաները մեծ մասամբ օնլայն կիրակնօրյա «դպրոցում» են սովորում, որը չնայած անգլերենով է հիմնականում, բայց որոշ հայերեն բառեր ու նախադասություններ նրանց ուսուցանվում են: Կրոնական

«դաստիարակությունը» հատկապես մեծահասակների համար է հուզական, քանի որ հին հիշողություններ է արթնացնում: Հայր Աբդալյանը պատմում է, որ մի անգամ, երբ մի մեծահասակ կնոջ տանը խունկ է վառել տնօրհնեքի ժամանակ, կինը հուզմունքից լաց է եղել՝ ասելով. «Այս հոտը վաղուց չէի ըմբոշխնել, շատ վաղուց, այն օրից, երբ տատս ինձ եկեղեցի տարավ Ղարաբաղում, երբ փոքր երեխա էի»:

## Անցյալի հետեւանքները

Մայքլ Գուլիելմոն պատմում է, որ ներգաղթածների մեծ մասը հոգեկան տրավմա էր ապրում: «Նրանց մենք մասնագետների մոտ ուղեկցեցինք Բելլավիու քաղաքում»: Բարեբախտաբար, նրանք շուտ վերագտան իրենց եւ աշխատելու ցանկություն հայտնեցին»:

Նույնը հաստատեց նաեւ **Աննա Բաղդասարյանը** Լոս Անջելեսից: «Նրանք շատ ուժեղ էին: Ավելի ուժեղ կամքի տեր, քան Իրաքից եկածները», ասաց նա: Այդուհանդերձ, Մարինա Բաղդասարովան զգում է, որ «նույնիսկ 20 տարի անց անցյալի տրավմայի ազդեցությունը դեռ առկա է եւ երբեք չի մոռացվելու: Ես երեխաներիս շատ բան չեմ պատմել, բայց զգում եմ նրանց վերաբերմունքը այն ամենի նկատմամբ, ինչը թուրքերին կամ ադրբեջանցիներին է վերաբերում: Դա մեր արյան մեջ ներթափանցել է, եւ երեւի մի քանի սերունդ է անցնելու, որ ցավը մի փոքր մեղմանա»:

Լիանա Ղազարյանն էլ հիշում է, թե ինչպես վիժեց սթրեսի հետեւանքով: «Ընդամենը 22 տարեկան էի եւ տեսնում էի, թե ինչպես են մարդկանց այրում՝ իմանալով, որ հայ է: Հայրս գալիս էր տուն եւ ասում, որ փողոցում ազերիները գոռում են. «Սպանեք հայերին: Սա մեր հողն է»: Բախտավոր եմ, որ շատ բան չտեսա»: Նրա երեխաները գիտեն դեպքերի մասին, եւ դուստրը ցանկանում է փաստաբան դառնալ, որպեսզի օգնի հայերին հուզող հարցերում:

Իսկ Անանիա արքեպիսկոպոս Արաբաջյանն իր հերթին պատմում է. «Նրանք անարդարություն տեսած մարդիկ են, որոնք ցավ են զգացել, վախ ապրել եւ կորուստներ տվել: Ես ինքս մինչեւ օրս մղձավանջներ եմ ունենում: Երբ կոտորածի հաջորդ օրը Սումգայիթ գնացի, քաղաքը զինվորականներով շրջափակված էր ու ավերված: Սարսափելի տեսարան էր: Այնտեղ ապրող հայերի համար, ինչ խոսք, փորձությունն առավել ծանր պետք է եղած լիներ: Հիշում եմ՝ մի աղջիկ եկավ ինձ մոտ՝ եկեղեցի մի օր եւ պատմեց, թե նրան ստիպել էին կոտրած ապակիների վրա քայլել եւ հետո էլ պարել: Նման դեպքերը չեն մոռացվի»:

Այս բոլորով հանդերձ՝ նրանք կամքի ուժ եւ հավատ ներշնչելով միմյանց, փորձում են շարունակել ապրել եւ կազմակերպվել նոր աշխարհում: Հաճախ են հավաքվում, նշում հիշարժան տարեթվեր եւ աղոթում՝ անմեղ զոհերի հիշատակը հավերժացնելու համար: Հավաքներին 200-300 հոգի է ներկա գտնվում: «Ամեն տարի նշում ենք Սումգայիթի օրը Սբ Վարդան եկեղեցում եւ մաղթում, որ նման բան էլ երբեք չկրկնվի», նշում է Բաղդասարովը, ավելացնելով, որ եկեղեցու հարավարեւմտյան մասում 2000 թվականին կանգնեցվել է կոտորածների զոհերին նվիրված մի խաչքար:

## Իրողությունն այսօր

Ադրբեջանահայերը փող չունեին իրենց գրպաններում, երբ Մ. Նահանգներ հասան, բայց նրանք մեկ առավելություն ունեին՝ Հայաստանից ներգաղթածների հետ համեմատած մեծացել էին առավել կոսմոպոլիս շրջապատում, ինչպես Ռուսաստանից եկածները: Նրանք այժմ էլ շարունակում են պահպանել իրենց բարձր մշակութային ժառանգությունը՝ ապրելով ռուսախոս համայնքներում (հատկապես Բրուքլինում) եւ մեծ կարեւորություն տալով մաթեմատիկային, երաժշտությանը եւ շախմատին:

Ամիրխանյանի փոխանցմամբ՝ սկզբում գրեթե բոլորն էին կառավարությունից օգնություն ստանում: Հիմա՝ միայն ծերերն ու հիվանդները: Երիտասարդներն աշխատում են: Բարձրագույն կրթություն ունեցողներն այստեղ վերահաստատեցին իրենց դիպլոմների իսկությունը եւ աշխատեցին իրենց մասնագիտությամբ կամ էլ սովորեցին նոր մասնագիտություններ: Դոկտորական պաշտպանած շատ մարդիկ նույնիսկ շինարարությունում կամ ավտոտեխսպասարկման կայաններում աշխատեցին՝ պահելու համար իրենց ընտանիքներին: «Այժմ նրանց զավակները հեղինակավոր ամերիկյան համալսարաններում են սովորում»:

**Կարեն Բաղդասարյանն** ավելացնում է. «Տարիքը մեծ նշանակություն ունեցավ: Երիտասարդները հեշտորեն եւ շատ շուտ հարմարվեցին, մեծահասակները՝ դժվարությամբ: Նրանցից ոմանք մինչեւ օրս չեն հարմարվել: Ծանոթներիցս մի քանիսն աշխատում են Մայքրոսոֆթում, բարձր դիրքեր են զբաղեցնում: Ուրիշները բիզնեսի կամ սպորտի ոլորտներում են առաջ գնացել: Բայց կան, որ դեռ չեն կարողանում մշտական աշխատանք գտնել: Ռոուդ Այլենդում, կարելի է ասել, 80 տոկոսը իր տեղը գտել է, 20 տոկոսը՝ ոչ»: Կարենի նմանները երկու անգամ են ստիպված եղել «ծայրից սկսել» ամեն ինչ: «Մեր հարսանիքը 1988-ի սեպտեմբերի 18-ին վերջինն էր, որ տեղի ունեցավ Բաքվի հայկական եկեղեցում: Ես 25 տարեկան էի, կինս՝ 23: Դրանից հետո մենք Ռուսաստան տեղափոխվեցինք եւ սկսեցինք բիզնեսով զբաղվել: Խորհրդային Միության փլուզման օրերն էին, ոչ ոք չգիտեր, թե ինչ է լինելու: Հետո Ամերիկա մուտք գործելու հավանությունն ստացանք եւ ամեն ինչ դարձյալ զրոյից սկսեցինք այստեղ՝ առանց լեզուն իմանալու եւ աշխատանք ունենալու», ասաց Կարենը:

Աբալյանի տվյալներով՝ Կոնեկտիկուտում տեղավորված ադրբեջանահայերը բարվոք վիճակում են հիմա: «20 տարի անց 99 տոկոսն արդեն տներ են գնել եւ ապրում են արվարձանային ամերիկացիների նման», ասում է նա, նշելով, որ այդ ժամանակվա իրավիճակն Ամերիկայում նպաստեց շուտ հարմարվելուն: «Հիմա երեւի ավելի դժվար կլիներ: Այդ ժամանակ Խորհրդային Միության ճակատագրի վերաբերյալ հետաքրքրությունն ավելի մեծ էր, մարդիկ նորեկների հանդեպ ուրիշ վերաբերմունք ունեին, ավելի պատրաստակամ էին օգնելու, հասնելու նրանց կարիքներին: Տնտեսական վիճակն էլ շատ ավելի բարվոք էր»:

Չեյանի կարծիքով էլ ադրբեջանահայերը, որպես խմբավորում, իրենց լավ դրսեւորեցին: «Ոմանք՝ նույնիսկ շատ լավ: Երիտասարդները բարձրագույն կրթություն են ստանում, ավելի փոքրերը մերվել են հասարակությանը, լավ են սովորում դպրոցներում: Մեծերից ոմանք բիզնեսի ոլորտում են, մի մասը դարձել է ատամնաբույժ: Բայց կան նաեւ սեւագործ բանվորներ եւ ուրիշներ, որոնք դեռ նպաստ են ստանում: Բայց ներգաղթողների մեծ մասն առավել սերտորեն է կապված եկեղեցու հետ»: Աբդալյանը համաձայնում է եւ ավելացնում. «Մեծամասնությունը կոպեկ չուներ, որ ժամանեց ԱՄՆ, իսկ հիմա տուն ունի եւ աշխատանք: Ով հաջողության չի հասել, լեզվի չիմացության պատճառով է կամ էլ տարիքի»:

Ադրբեջանահայերը, ըստ Արաբաջյանի, դեռ 1981-ից առավել սերտ կապեր էին հաստատել Հայկական եկեղեցու հետ եւ առավել մեծ հետաքրքրություն ցուցաբերել ազգային ինքնության ու պատմության հանդեպ: Դա մասամբ Խորհրդային Միությունում կատարված վերափոխումների արդյունքն էր, որն էլ հետագայում՝ Մ. Նահանգներում հեշտացրեց նրանց այդ գործընթացը: Նրանց առնվազն 10 տոկոսն այնտեղ ակտիվ մասնակցում է ինչպես եկեղեցական արարողություններին, այնպես էլ ապրիլի 24-ի, կանանց միջազգային օրվա եւ այլ միջոցառումներին: Կնունքներն ու ամուսնություններն անցկացվում են եկեղեցում, բայց «պետք է խոստովանել, որ օտարների հետ ամուսնությունների դեպքերը բավական մեծ թիվ են կազմում», Հարթֆորդում եւ շրջակայքում, Աբալյանի տվյալներով, 70 տոկոսը մասնակցում է եկեղեցական միջոցառումներին եւ միությունների կազմակերպած զբոսաշրջվածներին: Իսկ Կոնեկտիկուտում մեծամասնությունն ամուսնացել է հայերի, բայց ոչ անպայման բաքվեցի հայերի հետ:

Որոշ տարբերություն ադրբեջանահայերի եւ այլ հայկական խմբավորումների միջեւ, այնուամենայնիվ, դեռեւս զգացվում է եւ ոչ միայն առօրյա կենցաղում, այլեւ խոհանոցում՝ կերակրատեսակների ոլորտում: Խորհրդային շրջանի ներգործությունները դեռեւս շարունակվում են: «Ճիշտ է, դեկտեմբերի 25-ը եւ հունվարի 6-ը նշում ենք, բայց նշում ենք նաեւ առաջվա նման դեկտեմբերի 31-ը՝ որպես Նոր տարվա նախօրյակ, որն այստեղ այնքան էլ կարեւոր ու հիշարժան օր չէ, կամ էլ մարտի 8-ի տոնակատարությունը...», պատմում են մի խումբ ադրբեջանահայեր:

Ռոուդ Այլենդից Կարեն Բաղդասարյանի կարծիքով, մեծ շրջաններում (Լոս Անջելես, Ֆիլադելֆիա, Նյու Յորք) նրանք նույն ձեւով (ինչպես Ադրբեջանում) փորձում են ապրել, բայց դա նրանց այնքան էլ չի հաջողվում: Զբոսաշրջվներ, «փարթիներ» կազմակերպելը դառնում է «արհեստական նմանակում»: Նման միջոցառումներն ավելի լավ են ստացվում Բրուքլինի պես վայրերում:

Դեռեւս մեծ ջանքեր չեն գործադրվում ադրբեջանահայերին, որպես առանձին համայնքի, կազմակերպելու ուղղությամբ, ինչպես օրինակ՝ դա արվում է իրանահայերի կամ թուրքահայերի շրջանում: Բայց նորագույն տեխնիկայի (ինտերնետ, բջջային հեռախոս եւ այլն) ընձեռած հնարավորությունները միմյանց հետ կապի մեջ մնալուն նպաստում են: Որոշ մարդիկ օգտվում են ռուսալեզու www.odnoklassniki.ru կայքից: Գործում է նաեւ հատուկ Facebook-ը (http://www.facebook.com/group.php?gid=221-2597476) «Բաքվի հայերը» խորագրով, որը, օգոստոսի տվյալներով, ուներ 117 անդամ:

Ամիրխանյանը լավատես է: «Նոր սերունդը, վստահ եմ, գնահատելու է մեր ջանքերը: Նրանցից շատերն արդեն փոխում են իրենց ազգանունը եւ «յան» ավելացնում: Նրանք ավելի հայրենասեր են եւ օտարներին պարտադրում են իրենց ինքնությունը: Իրենց ծնողների հետ համեմատած նրանք ավելի լավ են խոսում հայերեն: Ղազարյանը հաստատում է այս միտքը: Նա իր երեխաների օրինակն է բերում: «Նրանք այստեղ են ծնվել եւ ազատ խոսում են անգլերեն: Դպրոցում, երբ ուսուցիչը հարցրել է, թե ով որ ազգության է պատկանում. «ամերիկացի», մեքսիկացի» եւ այլոց շարքերում դուստրս ասել է. «Ես հայ եմ»: Ուսուցիչն արձագանքել է, թե «Ամերիկայում ես ծնվել, ինչպե՞ս կարող ես հայ լինել»: Դուստրս պատասխանել է. «Հայրս ու մայրս հայեր են, ուրեմն ես էլ եմ հայ: Չեմ կարող ամերիկացի լինել»: Ուսուցիչը զիջել է՝ ասելով. «Ուրեմն ամերիկահայ ես»:

Արաբաջյանի կարծիքով՝ ադրբեջանահայերն ի վերջո կձուլվեն մնացած ամերիկահայերի հետ: «Դա լավագույն դեպքում: Իսկ ոմանք ընդհանրապես կձուլվեն եւ կդառնան ամերիկացիներ: Փոքրերը մեծացել են, ամուսնացել եւ այժմ զավակներ ունեն: Հավանաբար մեկ սերունդ եւս կհիշի ու կնշի, թե ինքը որտեղից է, բայց դրանից հետո դժվար է ասել, թե ինչ կվերապահի մեզ ապագան», եզրակացնում է նա:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

# Օբաման կորցրել է իր համակիրների 1/4-ին

## Համանման վիճակ է հանրապետականների ճամբարում



**2008-ի նախագահական ընտրություններում դեմոկրատների թեկնածու Բարաք Օբամային պաշտպանած ամերիկացիների մեկ քառորդը հիասթափվել է իր ընտրությունից եւ մտադիր չէ այսուհետեւ քվեարկել դեմոկրատների օգտին: Դրա վկայությունն են Ասոշիեյթեդ պրես գործակալության անցկացրած հարցման արդյունքները:**

**Հարցումն անցկացվել է Knowledge Metworks հաստատության հետ համատեղ: Հետազոտության նպատակն է պարզել, թե Օբամայի նախագահության ժամանակաշրջանում ինչպես են փոխվել ամերիկացիների քաղաքական նախասիրությունները:**

**Սեպտեմբեր-հոկտեմբերին անցկացված հարցումը ցույց է տալիս, որ 2008-ին Օբամային ձայն տված անձանց 25 տոկոսը մտադիր չէ դեմոկրատ թեկնածուների օգտին քվեարկել նոյեմբերի 2-ի ընդհանուր ընտրություններում, երբ տեղի կունենան կոնգրեսականների, նահանգապետերի եւ տեղական մարմինների ընտրությունները: Օբամայի նախկին կողմնակիցները հարցման կազմակերպիչներին հայտարարել են, որ նոյեմբերին իրենք քվեարկելու են հանրապետականների կամ անկախ թեկնածուների օգտին: Ավելին, հարցման մասնակիցների կեսը խոստովանել է, որ առհասարակ չի մասնակցելու ընտրություններին:**

**Արժե նշել, որ հարցումը համանման միտում է բացահայտել նաեւ հանրապետականների ճամբարում: 2008-ին հանրապետականների թեկնածու Ջոն Մակքեյնի օգտին քվեարկած ամերիկացիների գրեթե 1/4-ը նշում է, որ առայժմ չի կողմնորոշվել նոյեմբերի 2-ի ընտրությունների հարցում, բայց մասամբ համակրում է դեմոկրատներին:**

**Հետազոտության հեղինակների կարծիքով, հարցման արդյունքները ցույց են տալիս ընտրողների ընդհանուր հիասթափությունը ամերիկյան ընտրական համակարգից՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից:**

**Ավելի վաղ անցկացված հարցումները ցույց էին տվել, որ Դեմոկրատական կուսակցությունը աստիճանաբար զրկվում է ամերիկացիների աջակցությունից եւ նոյեմբերյան ընտրություններից հետո Կոնգրեսում կարող է կորցնել գերիշխող դիրքը: Հետազոտության հեղինակները կարծում են, որ Դեմոկրատական կուսակցության համակիրների թվի նվազումը բացատրվում է Օբամայի վարչակազմի հակասական որոշումներով, այդ թվում առողջապահության համակարգի բարեփոխմամբ, Իրաքի եւ Աֆղանստանի պատերազմներով, ինչպես նաեւ Նյու Յորքի ահաբեկչությունների վայրում խոշոր մզկիթ կառուցելու նախագծով:**

# Մերկելը խոստովանեց բազմամշակութային հասարակության կառուցման ձախողումը

**Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը խոստովանել է Գերմանիայում բազմամշակութային հասարակություն կառուցելու փորձերի լիակատար ձախողումը: «Գերմանական ալիք» ռադիոկայանը հաղորդում է, որ Մերկելը նման հայտարարությամբ հանդես է եկել Պոտսդամում Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության երիտասարդական կազմակերպության ժողովում:**



**Կառավարության ղեկավարը ներգաղթյալներից պահանջել է սովորել գերմաներեն եւ ինտեգրվել Գերմանիայի հասարակությանը: «Նրանք, ովքեր ուզում են դառնալ մեր հասարակության մասը, պարտավոր են ոչ միայն կատարել մեր օրենքները, այլեւ խոսել մեր լեզվով», հայտարարել է Մերկելը:**

**Դրա հետ մեկտեղ կանցլերը ընդգծել է ներգաղթի եւ հատկապես որակյալ մասնագետների անհրաժեշտությունը: Նրա խոսքերով, ամեն տարի կենսաթոշակի է անցնում 200 հազար գերմանացի, ինչը երկրում աշխատուժի պակաս է ստեղծում: Ընդսմին Մերկելը նշել է, որ ներգաղթյալներին պետք է դիմել լոկ այն ժամանակ, երբ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկված են գերմանացիների որակավորումը բարձրացնելու եւ նրանց աշխատանքի տեղավորելու նպատակով:**

**Իր ելույթում կանցլերը նաեւ մեկնաբանել է Գերմանիայի նախագահ Քրիստիան Վուլֆի խոսքերը: Օրերս Վուլֆը հայտարարել էր, որ «իսլամը դարձել է Գերմանիայի մի մասը», եւ օրինակ էր բերել ֆուտբոլիստ Մեսութ Օզիլին:**

**Բազմամշակութային մոդելի ձախողման մասին ուրբաթ օրը հայտարարել էր Քրիստոնեա-սոցիալական միության առաջնորդ, Բավարիայի վարչապետ Հորստ Զեեհոֆերը: Ավելի վաղ նա պահանջել էր սահմանափակել ներգաղթը Թուրքիայից եւ Մերձավոր Արեւելքից:**

**Օգոստոս-սեպտեմբերին Գերմանիայում աղմկալի սկանդալ էր ծագել Կենտրոնական բանկի վարչության նախկին անդամ, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ Թիլո Սառացինի «Գերմանիա. ինքնաոչնչացում» գրքի կապակցությամբ: Գրքում մասնավորապես նշվում է, որ գերմանական մշակույթը մերժող եւ Գերմանիայի հասարակությանը չմերվող ներգաղթյալների թվի աճը հանգեցնում է երկրի անկմանը:**

ԱԶԳ

# Մշակույթ

## Ոչ եւս է հայ գրքի ու մշակոյթի մեծ բարեկամ Յարութ Երէցեանը

Խոր ցաւով տեղեկացանք հայ գրքի եւ գրականութեան մեծ բարեկամ ու ջատագով, Լոս Անջելըսի «Ապրիլ» գրատան եւ հրատարակչութիւն հաստատութեան տէր եւ տնօրէն Յարութ Երէցեանի վաղահաս մահուան տխուր լուրը, որ տեղի ունեցաւ 2010 հոկտեմբեր 17-ին, յետ կարճատեւ սակայն անողոք հիւանդութեան:

Յարութ Երէցեան տասնամեակ մը մաս կազմեց Թէքէեան մշակութային միութեան Միացեալ Նահանգներու ու Կանադայի Կեդրոնական վարչութեան: Ան եղաւ լրջախոհ ու սակաւախօս, բայց պարտաճանաչ վարչականը՝ որուն անձնուէր ծառայութիւններով ու հետեւողական ճիգերով կարելի եղաւ լոյս ընծայել միութեանս մատենաշարէն տասնեակ մը հատորներ: Իր խորհուրդներն ու թելադրութիւնները Կեդրոնական վարչութեանս հրատարակչական ու ընդհանրապէս մշակութային ծրագիրներու վերաբերեալ ունեցան կենսական կարեւորութիւն՝ առնուած որոշումներուն մէջ: Անսահման էր իր ծանօթութիւնը եւ փորձառութիւնը հայ գրական ու մշակութային գործերու, գործիչներու եւ արժէքներու, չափանիշներու:

«Ապրիլ» գրատունը ժամադրավայրը դարձաւ Լոս Անջելըսի գրասէրներու, եւ ուխտավայրը այլ քաղաքներէ եւ երկիրներէ Լոս Անջելըս այցելող հայերու, որոնք ծարաւը ունէին հայերէն գրքի, խտասալիկի, տեսերիզի, նկարներու, ցուցաստակներու, ու մանաւանդ իրենց զաւակներուն ու թոռներուն համար մանկական գրականութեան ու լսատեսողական դաստիարակիչ նիւթերու: Եւ Յարութ, որքան ալ բազմազբաղ ըլլար, կը հասնէր բոլորին գոհացում տալու, կարելիութեան սահմաններուն մէջ, միշտ համբերութեամբ մտիկ ընելով բոլորին եւ լրջութեամբ նկատի առնելով անոնց փափաքները:

Յարութ Երէցեան երեսուն տարիներ պաշտօնավարած է որպէս՝ ԹՄՄիութեան Լոս Անջելըսի մասնաճիւղի փոխատենապետ, եւ քսան տարիներ՝ որպէս Հ. Բ. Ը. Միութեան Կալիֆորնիոյ թատերական յանձնախումբի անդամ:

Յարութ Երէցեանի թողած բացը երկար ժամանակ զգալի պիտի ըլլայ հայ մտաւորական դասին:

Թէքէեան մշակութային միութեան Միացեալ Նահանգներու եւ Կանադայի Կեդրոնական վարչութիւնը խորազգաց ցաւակցութիւններ կը յայտնէ ողբացեալի կողակիցին՝ Սիրունին, զաւակին՝ Առնոյին, եղբայրներուն՝ Գրիգորին (Բէյրութ), Ներսէսին (Լոնդոն) եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, հարազատներուն, բարեկամական լայն շրջանակին եւ ԹՄՄիութեան ու ՀԲԸ-Միութեան համայն անդամակցութեան:

*Թէքէեան մշակութային միութեան*
*կեդրոնական վարչութիւն*
*Բոստոն, հոկտեմբեր 18, 2010*

## Տխուր, թախծոտ հոգի՝ ծափերի եւ ծիծաղի ներքո

Երեւանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնի դահլիճը ծոր էր տալիս, ծովի ալիքների պես մեկ վերեւ, մեկ ներքեւ, մեկ ծիծաղի պոռթկում, հետո խուլ լռություն, կյանքի դասերի վերլուծություն, մեծ աշխարհից դեպի փոքր երկիր, հին ու նոր սերունդ, կյանքի հետագծով ետ ու առաջ անող եւ դահլիճին էլ իր հետեւից տանող արտիստ...«Ճակատագրի կատակներ» ներկայացումն էր:

Ամեն անգամ նրա խաղը դիտելուց, խաղ, որը վեր է ածվում բեմդահլիճ ներդաշնակության, միաձուլման, մտածել եմ՝ մեկ մարդու մեջ այսքան շնորհ, լիցք, եռանդ, էներգիա է դրված եւ փառք Աստծո, որ նա էլ այդ ամենը կարողանում է փոխանցել հանդիսատեսին: Ներկայացումը տարվում է թեթեւ, մշակված, գրագետ շարժումներով, ձայնի ականջ շոյող երանգներով, մատուցվում է ռեալ իրականությունը ծիծաղի, երգի, պարի, յուրատիպ խոսքի միջոցով: Սա այն դեպքն է, երբ դու ուրիշ դերասանի չես էլ սպասում, ինքն իրենով լցնում է բեմը՝ փայլուն կատարելով եւ խաղացողի, եւ նվագախմբի, եւ պարախմբի դերերը: Մարդն իրեն լիարժեք է զգում բեմի վրա, այն ծայրեծայր իրենն է, նա իշխում է, այն նաեւ դարձնում է յուրաքանչյուրինը, նրա խաղը զրույց է, քանի-քանի աշխարհահռչակ անունների արտահայտություն մեկ մարդու միջոցով: Եվ այդ ամենն արվում է մեծ պատասխանատվությամբ, ճաշակով, գրագետ:

Նրա ասելիքը միշտ էլ արդիական է, դրանով հանդերձ էլ հարազատ, կապ է հին ու նորի, արդեն փորձառուի, բայց եւ անընդհատ որոնողի, նա կյանքի չարն ու բարին ճաշակած, նաեւ ազգային համարձակ ու հավատով նայող մեկն է, ով բեմից ներարկում է՝ ա՛ռ խաչդ եւ առա՛ջ... Այդ մարդն ապրում է բեմի վրա, արարում, տառապում ու սիրում, որոնում, յուրաքանչյուր նրա մուտքը բեմ անկանգառ շարժում է, ամեն պահ պատրաստ ինչ-որ անսպասելի բան մատուցելու, նա կարողանում է ամենացավոտ խնդիրները ներկայացնել այնպիսի ցնցող ծիծաղ առաջացնելով, որ միայն յուրահատուկ մտածելակերպ եւ արտահայտչաձեւ ունեցող արվեստագետին է հատուկ:



Նրա արվեստի բանաձեւը տալ, քան իմ աղջիկն է ձեւակերպել՝ այդքան տիպիկ զգալով ոգին, չեմ փորձի: Նա դեռ փոքր էր, երբ ներկայացումներից մեկի ժամանակ ասաց. «Մամ, դահլիճը ծիծաղից ուշագնաց է լինում, բայց ախր ինքը շատ տխուր բաների մասին է խոսում»:

Ես միանգամից որսացի ամենակարեւորը, այն է՝ հաճախ ողբերգական, եւ իրոք տխուր երեւույթների ֆոնին մարդկանց աչքերից այդքան արցունք, ծիծաղի արցունքներ քամելու, վերքն անցավ բուժելու ունակությունը:

Վարդան Պետրոսյան ֆենոմենի մասին է խոսքը, մարդ, ով իր քաղաքացիական պարտքը կատարում է արվեստի միջոցով, «համալիր-դերասան»-ի հմտությամբ, ով կյանքի դժվարությունները, ժողովրդի հոգսերն ու խնդիրները պատմող յուրաքանչյուր ներկայացում դարձնում է տոն:

**ՄԱՐՈՒՍՅԱ ԱՄԱՏՐՅԱՆ**
**Հայաստանի ժուռնալիստների միության անդամ**

## Մատենադարանի արծաթակազմ ձեռագրերը վերանորոգողների նոր աշխատանքները

Պրոֆեսոր Ռոբերտ Շտեհլեն եւ Մարգրիտ Յաշկեն բարեկամացել են Հայաստանում, հոգեւոր թելերով ամուր կապվել են Մատենադարանին, հասկանալով, որ առանց նրան ծառայելու անկարող են շարունակել իրենց գործը: Երջանիկ դիպվածով պրոֆ Շտեհլեն առաջին անգամ Հայաստան եկավ այն խմբի հետ, որի ղեկավարը Մարգրիտ Յաշկեի ամուսինն էր: Նրանց հետ եղավ Մատենադարանում, ծանոթացավ վերանորոգման բաժնի ղեկավար **Գայանե Էլիազյանի** հետ, որի թույլտվությամբ առաջին անգամ ձեռքն առավ արծաթյա կազմով մի ձեռագիր եւ արտասվեց՝ միջնադարյան այդպիսի գանձեր պահպանող գիտական օջախում գտնվելու հուզմունքից:

«Այդ ձեռագիրը բավականին վնասված էր: Պրոֆ Շտեհլեն ասաց, որ իր կինը դարբին է եւ ինքը գեղարվեստական շատ գործեր է սովորել նրանից: Առաջարկեց իր օգնությունն ու մենք չկարողացանք մերժել, որովհետեւ այդպիսի ազնիվ դեմք ունեցող մարդուն ուղղակի հնարավոր չէր չվստահել: Կես տարի անց եկավ իր ծախսերով նորոգելու այդ կազմը՝ բերելով նաեւ արծաթ: Փորձնական վերանորոգումը հիմք դրեց տասը տարվա համագործակցության: Հիմա մեր արծաթյա կազմերը հրաշալի տեսք ունեն, իսկ նախկինում, իրոք, շատ վատ վիճակում էին», ասաց վերանորոգման բաժնի ղեկավար Գայանե Էլիազյանը:

Պրոֆեսոր Շտեհլեն կերպարվեստի արվեստաբան է, զբաղվում է արվեստի պատմությամբ եւ աշխարհագրությամբ, «Կերպարվեստի ուսուցման պրակտիկա» դասագրքի հեղինակն է, ունի գրաֆիկական աշխատանքներ, աշխատել է նաեւ մետաղի փորագրության ասպարեզում: Իսկ տիկին Յաշկեն մասնագիտությամբ կազմարար է, ունի իր սեփական արհեստանոցը, աշխատել է Վալդորֆյան դպրոցում՝ որպես կազմարարության ուսուցչուհի: Մատենադարանի հանդեպ ունեցել է զուտ մասնագիտական մեծ հետաքրքրություն, միշտ ցանկացել է իմանալ, թե ինչպե՞ս են պահպանվում հայ միջնադարյան ձեռագրերը:

«Միանգամից հասկացա, որ իմ օգնությունն ավելորդ չի լինի, եւ իմ ձեռք բերած գիտելիքները պետք է ներդնել այստեղ: Պրոֆեսոր Ռոբերտի հետ մեծագույն հաճույք եւ բավարարվածութուն ենք զգում այս աշխատանքից: Երբ նոր էի եկել Մատենադարան, այն ժամանակ գրքերի կազմարար էի: Այստեղ շատ բան տեսա, սովորեցի եւ որոշեցի ուսանել Շտուտգարտի համալսարանի ձեռագրերի վերանորոգման բաժնում: Հասուն տարիքում սովորեցի երկու տարի ու դիպլոմ ստացա», պատմեց տիկին Յաշկեն, որի օգնությամբ վերանորոգվում են նաեւ կազմերի կաշվե եւ կտորից պատրաստված փոկիկները:

Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ցուցասրահում այս օրերին ցուցադրվում են վերջին շրջանում վերանորոգված 13-17-րդ դարերի արծաթյա կազմերով տասը Ավետարանները, որոնց վրա իրենց շնորհազարդ մասերի դրոշմն են թողել գերմանացի պրոֆեսոր **Ռոբերտ Շտեհլեն** ու **Մարգրիս Յաշկեն**, որոնք արդեն 10 տարի իրենց անձնական միջոցներով վերանորոգում են Մատենադարանի արծաթակազմ ձեռագրերը՝ Գերմանիայից բերելով վերանորոգման համար անհրաժեշտ ամեն ինչ, այդ թվում՝ նաեւ արծաթ, ու բարեսիրությամբ կատարում են այդ սքանչելի աշխատանքը: Առ այսօր նրանք նորոգել են արծաթյա կազմերով հարյուր ձեռագիր, որոնց հիմնական մասը վերանորոգումից հետո դրվել է ցուցադրության՝ արժանանալով այցելուների հիացմունքին եւ երախտագիտությանը:

Յաշկե ամուսինները 1997-ից Մատենադարանի վերանորոգման եւ պահպանության բաժնի հովանավորներն են, միասին քաղաքական գործունեություն են ծավալում Գերմանիայի տարբեր քաղաքներում՝ մարդկանց ծանոթացնելով հայկական մշակույթին ու հատկապես Մատենադարանի գանձերին:

Մարգրիս Յաշկեի եւ պրոֆեսոր Շտեհլեի հետ երկարամյա շփումը ոգեւորիչ է ոչ միայն վերանորոգման բաժնի ղեկավարի եւ աշխատակիցների համար: Նրանց աշխատանքով հպարտանում եւ երախտիքի խոսքեր է ասում նաեւ Մատենադարանի տնօրեն **Հրաչյա Թամրազյանը**: «Արծաթյա կազմերն, իսկապես, արվեստի գլուխգործոցներ են, բայց գլուխգործոց են դառնում նաեւ այն դժվարին աշխատանքի շնորհիվ, որ կատարում են պրոֆեսոր Ռոբերտ Շտեհլեն ու Մարգրետ Յաշկեն, որոնք Մատենադարանի իսկական նվիրյալներ են: Նրանք առանձնահատուկ վերաբերմունք ունեն ամեն մի ձեռագրի ու կազմի նկատմամբ, նրանց կատարած մանրակրկիտ աշխատանքը վկայում է, որ իրենց համար ամեն մի ձեռագիրը սրբություն է: Նրանց պես մարդիկ հայտնություն են մեզ համար, քանի որ նրանց կատարած գործն իսկական դպրոց է մեր երիտասարդ մասնագետների համար, որոնք հնարավորություն ունեն ամիսներ շարունակ դիտարկելու եւ ուսանելու այդ իսկական արվեստի բոլոր նրբությունները: Ուրախությամբ պիտի ասեմ, որ այդ աշխատանքները շուտով կամփոփվեն Մատենադարանի արծաթյա կազմերի ուսումնասիրություն-ալբոմում:



**Աջից ձախ՝ Գայանե Էլիազյան, Մարգրիս Յաշկե, Ռոբերտ Շտեհլե**

Մեկ տարի հետո կտեղափոխվենք նոր մասնաշենք, ուր վերականգնման բաժնի տարածքները կբազմապատկվեն, կգան նոր մասնագետներ, որոնց համար մեր գերմանացի բարեկամների դպրոցը չափազանց ուսանելի կլինի: Բացի իրենց վարպետությունից եւ գիտական մեթոդաբանությունից, նրանք իրենց մարդկային նկարագրով վարակիչ օրինակ են երիտասարդների համար: Մենք վայելում ենք նրանց ընկերությունն ու ցանկանում ենք, որ այն տեւի տասնյակ տարիներ», Ռոբերտ Շտեհլեի եւ Մարգրետ Յաշկեի ներկայությամբ բացված արծաթակազմ տասը ձեռագրերի ցուցադրության բացման ժամանակ ասաց Հրաչյա Թամրազյանը:

**ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

## «Զիկկուրատ»՝ Փիթեր Բալաքյանի բանաստեղծությունների նոր հատորը

**Ըստ հանրագիտարանային բացատրության «Զիկկուրատը (աքքադերեն) Հին Միջագետքի պաշտամունքային կառույցի տիպ է» որն առաջացել է «մ. թ. ա. 3-րդ հազարամյակի վերջերին, այնուհետեւ դարձել Հին Միջագետքի ամենաբնորոշ շինություններից: Ձեւով՝ աստիճանավոր, հոծ զանգվածեղ բուրգ էր, բաղկացած հաջորդաբար փոքրացող, մեկը մյուսին դրված հատած բուրգերից... Բուրգն ավարտվում էր տաճարով, որ քաղաքի գլխավոր աստծո «բնակատեղին» էր»: Զիկկուրատները «չափերով շատ մեծ էին» եւ պահպանվել են Իրաքում եւ Իրանում: «Համեմատաբար լավ է պահպանվել Ուր-Նամմուի Զիկկուրատը»:**

**Ահա հինավուրց շինության այս տիպի անվանումն էլ Կոլգեյթ համալսարանի անգլերենի դասախոս, «Փեն Ալբրանդ» մրցանակի արժանացած գրող-հուշագիր Փիթեր Բալաքյանն օգտագործել է որպես խորագիր բանաստեղծությունների իր նոր գրքի, որն ԱՄՆ-ում հրատարակվել է սեպտեմբերի 11-ին: Թվականը խորհրդանշական է, քանի որ հատորում տեղ գտած բանաստեղծությունների մեծ մասը, «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ, առնչվում է 9/11-ի իրադարձությունների, ընդհանրապես աղետի հետեւանքների եւ տրավմայի շարունակական ազդեցության հետ:**

**Սա իր մեծապես գնահատված «Ջուն-Տրի: Նոր եւ ընտրված բանաստեղծություններ, 1974-2000» հատորից հետո լույս տեսած բանաստեղծությունների առաջին գիրքն է, որի մասին մրցանակակիր բանաստեղծուհի Կարոլին Ֆորշեն նշել է. «Հատկանշական յուրահատկությամբ է Բալաքյանն իր թեմայի հիմնական մտքի արձագանքը հայտնաբերում առաջին մեծ երկնաքերի՝ Ուրի Զիկկուրատի կառուցման մեջ եւ դա իր էպիկական «A-Train/Ziggurat/Elegy» պոեմին տալիս է պատմական այնպիսի խորություն, որպիսին ես երբեք չեմ տեսել վերջին տարիների ամերիկյան պոեզիայում: Նա կարողացել է այնտեղ հրաշալիորեն միահյուսել պատմական, փիլիսոփայական, քաղաքական եւ հոգեբանական տարրերը»:**

**1960-ականների վերջերին Բալաքյանը որպես գրիչ-փոստատար աշխատել է Մանհեթենի կենտրոնական մասում, որտեղ այդ ժամանակ կառուցվում էր «Առեւտրի համաշխարհային կենտրոնը»: Հետագայում, ուրիշ շատ-շատերի թվում, նա սարսափով ու հուզումով ականատես է եղել, թե ինչպես են դրանք փլուզվում: Ահա այդ վերոնշյալ պոեմում նա դրանց ոդիսականն է հյուսում լեզվի հանդեպ այնպիսի մի նրբազգացողությամբ, որին ծանոթ ենք «Ճակատագրի սեւ շունը» եւ «Հրկիզվող Տիգրիսը» հատորներից: Նրա գրքերը թարգմանվել են մեկ տասնյակից ավելի լեզուների:**

**Բալաքյանը սեպտեմբերից մինչեւ նոյեմբերի վերջը տարբեր քաղաքներում շրջագայելով ներկայացնում է իր նոր գիրքը:**

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

# «Միկան» շարունակեց հաղթական երթը

Շախմատի Եվրոպայի ակումբային առաջնության 2-րդ տուրն էլ հաղթական էր «Միկայի» շախմատիստների համար: Տղամարդիկ 4,5-1,5 հաշվով պարտության մատնեցին Իսրայելի «Բեեր Շեւային», իսկ կանայք առավելության հասան Սանկտ Պետերբուրգի շախմատային ակումբի թիմի նկատմամբ (3-1):



Տղամարդկանց մրցաշարում 2-րդ տուրում «Միկայի» կազմում առաջին խաղատախտակի մոտ իր տեղը զբաղեցրեց Լեւոն Արոնյանը, որն առաջին հաղթական միավորը պարգեւեց թիմին` պարտության մատնելով Ալեքսանդր Հուզմանին: Հաղթանակներ տոնեցին նաեւ Արման Փաշիկյանն ու Զավեն Անդրեասյանը` առավելության հասնելով համապատասխանաբար Ալոն Գրինֆելդի եւ Իլյա Խմելնիկերի նկատմամբ: Հակոբյան-Ռոդշտեյն, Սարգսյան-Պոստնի, Մելքումյան-Նաբատու պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

2 տուրից հետո «Միկան» վաստակած 10 միավորով 4-րդ տեղում է: Նույնքան միավոր ունեն նաեւ «Բադեն-Բադենը», «Ուրալն» ու ՍՈԿԱՐ-ը: Աղյուսակը 10,5 միավորով գլխավորում են Ռուսաստանի «Էկոնոմիստն» ու բոսնիական «Բիհաչը»: «Էկոնոմիստը» 5-1 հաշվով հաղթեց գերմանական «Սոլինգենին», իսկ «Բիհաչը» 4,5-1,5 հաշվով պարտության մատնեց իտալական «Գրոս Հակեին»: Նույնպիսի հաշվով ՍՈԿԱՐ-ը հաղթեց բելգիական «Էյնաքենին»: Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի թիմը 3,5-2,5 հաշվով առավելության հասավ ռուսական մեկ այլ ակումբի` «Յուգրայի» նկատմամբ: Որոշիչ եղավ Վասիլի Իվանչուկի հաղթանակը Դմիտրի Յակովենկոյի նկատմամբ: Մյուս պարտիաներում, այդ թվում Մովսիսյան-Ռուբլյովսկի մրցավեճում, գրանցվեցին ոչ-ոքիներ: Սանկտ Պետերբուրգի թիմը եւս 2 հաղթանակ է տոնել, սակայն բոլոր պարտիաներում վաստակել է ավելի քիչ` 9 միավոր եւ զբաղեցնում է 7-րդ տեղը: Ընդհանրապես մրցաշարի մասնակից 49 թիմերից 11-ը երկու մրցախաղերում էլ հաղթել են:

Կանանց մրցաշարի առաջատարը Երեւանի «Միկան» է, որը վաստակել է 7 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով առաջ է անցել ռուսական «Գիպրորոշտրանսից»: 2-րդ տուրում իր 2-րդ հաղթանակը տոնեց թիմի առաջատար Էլինա Դանիելյանը` պարտության մատնելով Վիկտորիա Չմիլիտեին: 2-րդ հաղթական միավորը թիմին պարգեւեց Լիլիթ Մկրտչյանը` 3-րդ խաղատախտակի վրա շահելով պարտիան Քեթեւան Արախամիա-Գրանտի հետ մրցավեճում: Հարիկա Դրոնավալին հաշտություն կնքեց Մոնիկա Սոչկոյի հետ: Նույնպիսի ելք ունեցավ նաեւ Լիլիթ Գալոյանի եւ Եկատերինա Աթալիկի մրցավեճը:

«Գիպրորոշտրանսը» 3,5-0,5 հաշվով առավելության հասավ նորվեգական «Շակսելկապի» նկատմամբ: 3-րդ տեղում 6 միավորով ռուսական AVS-ն է, որը 3-1 հաշվով հաղթեց սերբական BAS-ին: 2 հաղթանակ է տոնել նաեւ Թբիլիսիի «Սամայան», որը 2,5-1,5 հաշվով պարտության մատնեց Մոնտե Կառլոյի թիմին: Առաջին խաղատախտակի վրա Մայա Չիբուրդանիձեն հաշտություն կնքեց հնդիկ շախմատիստուհի Համպի Կոներուի հետ, որը մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի (2593): Լելա Ջավախիշվիլին պարտվեց Հոու Յիֆանից, իսկ Սալոմե Մելիան եւ Նինո Խուրցիձեն առավելության հասան համապատասխանաբար Աննա Մուզիչուկի եւ Պիա Կրամլինգի նկատմամբ: Հենց «Սամայայի» հետ էլ «Միկան» 3-րդ տուրում ուժերը կչափի: Տղամարդկանց «Միկա» թիմը 3-րդ տուրում կմրցի Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի հետ:

# Աբրամովիչը պատրաստ է վճարել Ռունիի համար



Անգլիայի հավաքականի եւ «Մանչեսթր Յունայթեդի» հարձակվող Ուեյն Ռունին ակումբի ղեկավարությանը տեղյակ է պահել, որ չի պատրաստվում երկարաձգել պայմանագիրը, որի ժամկետը լրանում է 2012-ի հունիսին: Պատճառը վերջին շրջանում թիմի գլխավոր մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնի հետ ունեցած տարաձայնություններն են: Վերջինս Ռունիին չէր ընդգրկում թիմի հիմնական կազմում, պատճառաբանելով, թե ֆուտբոլիստը վնասվածք ունի: Սակայն Ռունին հայտարարել էր, որ պատրաստ է խաղալու ու ոչ մի խնդիր չունի:

Ընթացիկ մրցաշրջանն առայժմ անհաջող է դասավորվում Ուեյն Ռունիի համար: Ամռանը ՀԱՀ-ում անցկացված աշխարհի առաջնությունում նա ոչնչով աչքի չընկավ` չկարողանալով նույնիսկ մեկ գոլ խփել: «Մանչեսթր Յունայթեդում» էլ անցկացրած 18 խաղերում Ռունին ընդամենը մեկ գոլ է խփել, այն էլ` 11 մ հարվածով: Եթե այսպես շարունակվի, ապա շուտով նա իր հաստատուն տեղը կգրավի թիմի պահեստայինների նստարանին:

Նման իրավիճակում «Մանչեսթր Յունայթեդը» հավանաբար ձմռանը փորձի վաճառել Ռունիին, մանավանդ որ արդեն նրանով հետաքրքրվում են «Մանչեսթր Սիթին», «Չելսին» ու Մադրիդի «Ռեալը»: Բրիտանական լրատվամիջոցների տեղեկացմամբ, «Մանչեսթր Սիթին» պատրաստ է Ռունիին շաբաթական 230 հազար ֆունտ ստեռլինգ վճարել, ինչը նրան կդարձնի անգլիական պրեմիեր լիգայի ամենաբարձր վարձատրվող խաղացող: Իսկ «Մանչեսթր Յունայթեդը» մտադիր չէ Ռունիին շաբաթական 150 հազար ֆունտ ստեռլինգից ավելի վճարել: Ըստ The Daily Mail-ի, Ռունին տեղեկացրել է մտերիմներին, որ պատրաստ է քննարկել «Մանչեսթր Սիթիի» առաջարկը: «Չելսիի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին էլ հայտարարել է, որ հետեւում է իրադարձությունների զարգացմանը. «Ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի իրավիճակը մի փոքր պարզվի: Եթե «Մանչեսթր Յունայթեդը» համաձայնվի վաճառել Ռունիին, ապա ուրախությամբ նրան կընդգրկենք մեր թիմի կազմում: Իհարկե, մեզ անհրաժեշտ կլինի մրցակցել մյուս ակումբների հետ, սակայն Ռոման Աբրամովիչն ինձ վստահեցրել է, որ անհրաժեշտության դեպքում կտրամադրի համապատասխան միջոցներ»:

Մադրիդի «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսն էլ արդեն հայտարարել է, որ շատ է ցանկանում աշխատել Ռունիի հետ եւ հաճույքով նրան Մադրիդ կբերի: Ճիշտ է, դժվար թե Ռունին համաձայնվի տեղափոխվել Մադրիդ, քանի որ նրա կինը` Կոլինը ցանկանում է մնալ Անգլիայում:

## ՀԱՄԱՌՈՏ

### Ազատազրկում համբույրի համար

**Իրանցի 3 ֆուտբոլիստի բանտարկություն է սպառնում օդանավակայանում երկրպագուհիներից մեկին համբուրելու համար: Երկրում ընդունված կարգի համաձայն, անծանոթ տղամարդու եւ կնոջ միջեւ ֆիզիկական ցանկացած շփում արգելվում է: Դատարանի որոշմամբ օրինազանցին սպառնում է ճիպոտի հարված, դրամական տուգանք կամ ազատազրկում:**

### Մեկնարկում է «Մեծ սաղավարտի» նոր խաղարկությունը

**Երեկ ավարտվեց շախմատի «Մեծ սաղավարտ» մրցանակի խաղարկությունը, որում հաջողության հասավ Վլադիմիր Կրամնիկը, իսկ այսօր Չինաստանի Նանցզին քաղաքում արդեն մեկնարկելու է նոր խաղարկության առաջին փուլը: Երկու շրջանով անցկացվելիք մրցաշարում հանդես կգան 6 գրոսմայստերներ` Մագնուս Կառլսենը (2826), Վեսելին Թոփալովը (2803), Վիշվանաթան Անանդը (2800), Վան Յուեն (2732), Վուգար Հաշիմովը (2719) եւ Էթիեն Բաքրոն (2716):**

## ՆԱՐԴԻ

# Չեմպիոնները որոշվեցին

**Ավարտվեց նարդու Հայաստանի հերթական առաջնությունը, որն անցկացվեց կարճ եւ երկար խաղաձեւերից: Կարճ խաղաձեւում անհատական մրցումներում բոլորից հաջող հանդես եկավ էջմիածնեցի Խաչիկ Մելիքյանը` հռչակվելով Հայաստանի չեմպիոն: Եզրափակիչում նա պարտության մատնեց երեւանցի Ռուբեն Մարտիրոսյանին: 3-4-րդ տեղերը գրավեցին երեւանցիներ Սմբատ Պողոսյանն ու Բագրատ Աբրահամյանը:**

**Թիմային պայքարում հաջողությունն ուղեկցեց «Սյունիքին», որի կազմում հանդես եկան Արմեն Ստեփանյանը, Ռուբեն Մարտիրոսյանն ու Հրանտ Բադալյանը: Եզրափակիչում «Սյունիքը» հաղթեց էջմիածնի «Արա եւ Այծեմնիկ» թիմին:**

**Զույգերով (խորհրդակցելով) մրցումներում հաջողության հասավ Աշոտ Վարդապետյան-Հայկ Խաչատրյան երկյակը, որն առավելության հասավ Դավիթ եւ Սուրեն Կարաթորոսյանների նկատմամբ:**

**Երկար խաղաձեւում Հայաստանի չեմպիոնի տիտղոսին արժանացավ Ռազմիկ Ավագյանը: Եզրափակիչում նա պարտության մատնեց Աշոտ Վահրադյանին: Առաջնության հաղթողներին հանձնվեցին մեդալներ, հուշանվերներ ու պարգեւավճարներ:**

# Մրցասպարեզ են դուրս գալիս պատանի շախմատիստները

**Այսօր Հունաստանի Պորտո Կարաս քաղաքում մեկնարկում է շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը, որն անցկացվում է տարիքային 6 խմբով: Հայաստանն այդ մրցումներում կներկայացնեն 19 շախմատիստներ: Հիշեցնենք, որ սեպտեմբերին կայացած Եվրոպայի պատանեկան առաջնությունում հայ շախմատիստներից երեքը` Սամվել Տեր-Սահակյանը (մինչեւ 18 տարեկանների մրցաշարում), Կարեն Գրիգորյանը (16 տ.) եւ Շանթ Սարգսյանը (8 տ.) դարձան փոխչեմպիոններ: Այս եռյակից աշխարհի առաջնությունում մասնակցելու է միայն Սամվել Տեր-Սահակյանը, որը պատանեկան մրցաշարերի հսկայական փորձ ունի: Նա իր վարկանիշով (2516) մինչեւ 18 տարեկանների մրցաշարի մասնակիցներից զիջում է միայն հնդիկ Սետուրամանին (2535): Իսկ պատանիների մրցաշարի տարիքային 6 խմբերում ընդգրկված մասնակիցների մեջ Սամվելն իր վարկանիշով 3-րդն է: Նրան մեկ միավորով է գերազանցում մինչեւ 16 տարեկանների մրցաշարի մասնակից, ադրբեջանցի Նիջաթ Աբասովը:**

**Շախմատի աշխարհի պատանեկան առաջնություններում տարբեր տարիներին չեմպիոնի տիտղոսի են արժանացել նաեւ հայ շախմատիստները: Պատանիների աշխարհի կրկնակի չեմպիոններ են Վլադիմիր Հակոբյանն ու Էլինա Դանիելյանը: Հակոբյանը 1986-ին Արգենտինայում ուժեղագույնն է ճանաչվել մինչեւ 16 տարեկանների մրցաշարում, իսկ երեք տարի անց Պուերտո Ռիկոյում ոսկե մեդալի է արժանացել մինչեւ 18 տարեկանների մրցաշարում: Էլինա Դանիելյանը 1992-ին արդեն որպես անկախ Հայաստանի ներկայացուցիչ աշխարհի չեմպիոնուհի է հռչակվել 14 տարեկանների մրցաշարում, որն անցկացվում էր Գերմանիայի Դույսբուրգ քաղաքում: Իսկ հաջորդ տարի Բրատիսլավայում անցկացված աշխարհի պատանեկան առաջնությունում նա առաջին տեղը գրավեց մինչեւ 16 տարեկանների մրցավեճում:**

**1994-ին Հունգարիայում մինչեւ 12 տարեկանների աշխարհի չեմպիոն է դարձել Լեւոն Արոնյանը, իսկ երկու տարի անց հաջողության է հասել Գաբրիել Սարգսյանը մինչեւ 14 տարեկանների մրցավեճում: Պատանեկան շախմատում հայ շախմատիստների վերջին ամենամեծ նվաճումը գրանցվեց 2006-ին Բաթումում, որտեղ Ռոբերտ Աղասարյանը դարձավ մինչեւ 12 տարեկանների աշխարհի չեմպիոն:**

# Թենիսիստները սերբերից չեն վախենում



**Դեկտեմբերի 3-5-ը Բելգրադում նախատեսված է թենիսի Դեւիսի գավաթի եզրափակիչը Սերբիայի եւ Ֆրանսիայի հավաքականների միջեւ: Հաշվի առնելով վերջերս սերբ ֆուտբոլային ֆանատների հրահրած անկարգությունները Ջենովայի մարզադաշտում, թենիսի միջազգային ֆեդերացիան մտադիր է մանրակրկիտ ստուգել Բելգրադում անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Սակայն Բելգրադից մրցախաղը տեղափոխելու մասին խոսք չկա, մանավանդ որ Ֆրանսիան մինչ օրս նման հարց չի բարձրացրել:**

**Սերբիայի թենիսի հավաքականի ավագ Նովակ Ջոկովիչն ափսոսանք է հայտնել Ջենովայում տեղի ունեցածի համար. «Անտարակույս, այդ ամենին ականատես լինելը տհաճ էր, հատկապես այն պատճառով, որ անկարգությունները հրահրել էին սերբ ֆանատները»:**

**Հարկ է հիշեցնել, որ 2009-ի Ավստրալիայի թենիսի բաց առաջնության ժամանակ ծեծկռտուք էր սկսվել սերբ եւ բոսնիացի ֆանատների միջեւ: Ոստիկանությունը ձերբակալել էր միջադեպի մասնակիցներից երկուսին, իսկ մոտ 30 հոգու վտարել էր տրիբունայից:**

# «Լիվերպուլը» հետաքրքրվում է Կերժակովով

Ռուսաստանի հավաքականի եւ Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» կազմում Ալեքսանդր Կերժակովի արդյունավետ խաղը նրա վրա է բեւեռել անգլիական «Լիվերպուլի» ուշադրությունը: Նրա տրանսֆերի դիմաց «Լիվերպուլը» պատրաստ է 6 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Կերժակովը «Զենիթի» հետ դեռեւս 3 տարվա պայմանագիր ունի կնքած: Սակայն «Լիվերպուլը» մտադիր է ձմռանը գործարք կնքել ֆուտբոլիստի հետ:

# Մրցանակային հիմնադրամն աճել է

Թենիսի Ավստրալիայի բաց առաջնության կազմակերպիչները որոշել են 3,8 տոկոսով ավելացնել մրցանակային ընդհանուր հիմնադրամը` այն հասցնելով 24,2 մլն դոլարի: Մրցաշարի հաղթողները կստանան 2,1 մլն դոլար: Այդ գումարն ավելին է, քան այս տարի ստացել էին ԱՄՆ-ի թենիսի բաց առաջնության հաղթողներ Ռաֆայել Նադալն ու Կիմ Կլիյստերսը 1,7-ական մլն դոլար:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Իսկ դրոշն արդեն որոշե՞լ եք. խաչն ու լուսինը միասի՞ն

Թե որեւէ մեկը հայտարարի, որ ժամանակակից Հարավային Կովկասում հնարավոր է ստեղծել թեկուզ երկու պետությունների համադաշնություն, ապա դա կամ կընկալվի որպես բացառապես հույս, կամ ծիծաղ կառաջացնի եւ քաղաքագետ-վերլուծաբան-փորձագետները այդ հայտարարությունը լսելուց հետո անմիջապես կմոռանան: Սակայն երբ նման հայտարարությամբ հանդես է գալիս որեւէ երկրի նախագահ, ապա նրա ասածները ուղղակի մոռանալ հնարավոր չէ, քանի որ երկրի նախագահները հենց այնպես բառեր չեն ասում: «**Ազգը**» հուլիսի 21-ի համարում տեղեկացրեց, որ Վրաստանի նախագահը հուլիսի 20-ին ծովափնյա Բաթումում ընդունելով Ադրբեջանի իր գործընկերոջը, հայտարարեց, որ Թբիլիսին ցանկանում է համադաշնություն ստեղծել Ադրբեջանի հետ. «Մենք միմյանց սկիզբն ու վերջն ենք», նշել էր Սաակաշվիլին: Վրաստանի նախագահի այս հայտարարությունից հետո այդ երկրի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Վաշաձեն նշեց, որ այժմ Վրաստանի ԱԳՆ-ում «ընթանում է գործընթաց՝ կապված Ադրբեջանի հետ համադաշնություն ստեղծելու հետ»: Սա արդեն նշանակում է, որ Սաակաշվիլիի հայտարարությունը, որին, ի դեպ, Իլհամ Ալիեւը որեւէ կերպ մինչեւ այսօր չի արձագանքել, պատահական չէ եւ պահանջում է Կովկասում լուրջ շահեր ունեցող երկրների եւ կովկասյան խնդիրներով զբաղվող փորձագետների լուրջ գնահատականը: Երեկ «Նովոստի» մամուլի ակումբում կազմակերպվել էր տեսակամուրջ՝ Երեւան-Թբիլիսի-Մոսկվա՝ հենց վրաց-ադրբեջանական հնարավոր համադաշնությունը քննարկելու նպատակով: Երեւանից մասնակցում էին քաղաքագետներ՝ Կովկասի ինստիտուտի տնօրեն **Ալեքսանդր Իսկանդարյանը** եւ ԱՊՀ ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն **Ալեքսանդր Մարգարովը**: Մոսկվան ներկայացնում էին Ռազմավարական զարգացման ձեւավորման կենտրոնի փոխնախագահ Գրիգորի Տրոֆիմչուկը, Ռուսաստանում ադրբեջանական համայնքի ներկայացուցիչ Սոյուն Սադիկովը, ներկայացուցիչներ հայկական եւ վրացական համայնքներից եւ «Ռազմավարական մշակույթ» հիմնադրամի փոխտնօրեն Անդրեյ Արեշեւը: Թբիլիսիից քննարկմանը մասնակցում էին քաղաքագետ, հոգեբան **Ռամազ Սակվարելիձեն,** Եվրասիայի ինստիտուտի ղեկավար **Գուլբաթ Ռցխիլաձեն** եւ այլք:

Միանգամից նշենք, որ Սաակաշվիլու «պլանը» նույնիսկ վրաց փորձագետների մեջ խիստ կասկածների տեղիք է տալիս: Մասնավորապես Սակվարելիձեն կարծիք հայտնեց, որ ինչպես Թբիլիսին, այնպես էլ Բաքուն պատրաստ չեն համադաշնություն կազմել. «Դա քիչ հավանական է: Ես ուզում եմ հիշեցնել, որ նման խոսակցություններ Կովկասում միշտ էլ եղել են, սակայն՝ միայն խոսակցություններ: Կոնկրետ 90-ականներին նման գործընթաց ցանկանում էին սկսել, ընդ որում՝ ընդգրկելով ոչ միայն Վրաստանն ու Ադրբեջանը, այլեւ՝ Հայաստանը: Սակայն վերջինս գնաց «Ղարաբաղի ճանապարհով», ինչն էլ անհնար դարձրեց, փաստորեն, որեւէ համադաշնության ստեղծումը Կովկասում», նշեց Սակվարելիձեն: Վրացի քաղաքագետի հետ համաձայնեց Ալեքսանդր Իսկանդարյանը, որը հավելեց միայն, որ եթե ի վերջո վրաց-ադրբեջանական համադաշնությունը իրականություն դառնա, ապա Թբիլիսին կդառնա «փոքր եղբայր», քանի որ. «Ադրբեջանը իր տնտեսությամբ, իր բնակչությամբ, իր ռեսուրսներով շատ ավելի հզոր երկիր է Վրաստանից», նկատեց Իսկանդարյանը՝ հավելելով, որ Սաակաշվիլու հայտարարությունը պարզապես «նետված ինֆորմացիա» է. «Իհարկե, ազատ առեւտրի, թափանցիկ եւ հեշտ անցանելի սահմանների առկայությունը շատ լավ է, սակայն Հարավային Կովկասը միավորվելու հեռանկար պարզապես չունի: Թբիլիսիում ես հանդիպում եմ շատ մարդկանց, որոնք այո, չեն թաքցնում, որ կցանկանային միավորվել Եվրոպայի հետ, սակայն ես չեմ հանդիպել գոնե մեկին, որը կասեր՝ ես ուզում եմ միավորվել Ադրբեջանի հետ, միգուցե բախտս ուղղակի չի բերել», նշեց Իսկանդարյանը: Ռուսաստանում վրացական համայնքի ներկայացուցիչ Լեւան Պեսեւանիձեն, սակայն, ամենեւին չի կիսում Իսկանդարյանի կարծիքը. «Նախ ուզում եմ շեշտել, որ Ադրբեջանի հետ համադաշնության մեջ ես Վրաստանի համար որեւէ վտանգ չեմ տեսնում, իսկ խոսակցությունները՝ «մեծ ու փոքր» եղբայրների մասին, կարծում եմ, նպատակահարմար չեն: Այսօր Վրաստանը տնտեսապես զարգացող երկիր է եւ, բնական է, որ ցանկանում է էլ ավելի արագացնել իր տնտեսական զարգացումը՝ կազմելով միություն հզոր Ադրբեջանի հետ», նշեց Պեսեւանիձեն: Այստեղ հարկ է նկատել, որ վերջինս ներկայացնում է ՌԴ-ում վրացական համայնքը, նա չի ապրում Վրաստանում եւ, բնականաբար, չի կարող վրացական կյանքի վերաբերյալ ունենալ հնարավորինս օբյեկտիվ կարծիք: Այդպիսի կարծիք կարող են ունենալ հենց Վրաստանում բնակվող փորձագետները, որոնցից մեկ՝ Ռցխիլաձեի կարծիքով. «Ադրբեջանի հետ համադաշնությունը ծայրահեղ վտանգավոր կլինի Վրաստանի համար: Առաջանում է մի տրամաբանական հարց, ինչո՞ւ մենք կարող ենք միավորվել՝ ինչպես այստեղ նշվեց, հզոր Ադրբեջանի հետ, բայց նույնը չենք կարող անել շատ ավելի հզոր Ռուսաստանի հետ: Պետք չէ մոռանալ կրոնի եւ ազգային ինքնության մասին: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ «Կովկասում է նաեւ Հայաստանը»: Վստահ եմ, որ սա պրովակացիա է՝ ուղղված Մոսկվային», նշեց Վրաստանում բնակվող Պեսեւանիձեն: Իսկ թե ինչո՞ւ են երկու «եղբայրական երկրները» մոռանում Կովկասում Հայաստանի գոյության մասին, պարզ դարձավ ՌԴ-ում ադրբեջանական համայնքի ներկայացուցիչ Սադիկովի խոսքից. «Իհարկե շատ լավ կլինի, որ Հայաստանն էլ միանա մեզ, սակայն Երեւանը, պաշտպանելով ղարաբաղցի ծայրահեղականներին, կամովին դուրս է մղել իրեն տարածաշրջանային գործընթացներից», Ղարաբաղի մասին խոսելու առիթը բաց չթողնելով՝ ասաց Սադիկովը: Սակայն, ինչպես պարզ է դառնում ռուս փորձագետների խոսքերից, Հայաստանին անտեսել չի կարելի. «Հարավային Կովկասում շրջանցել Երեւանին չի կարելի, սակայն ես հասկանում եմ Վրաստանին՝ նա պարզապես ցանկանում է ամրապնդել Կովկասում իր քաղաքական դիրքը եւ տնտեսապես զարգանալ: Բացի այդ՝ չի կարելի մոռանալ նաեւ Թուրքիայի գործոնը, որը նույնպես իր տեսլականն ունի Կովկասի վերաբերյալ: Ես պարզապես ուզում եմ խորհուրդ տալ Թբիլիսիին՝ լավ մտածել եւ հասկանալ՝ ի վերջո ի՞նչ է ուզում՝ Մոսկվա՞, թե՞ Եվրոպա», ասաց Տրոֆիմչուկը, որի խոսքերին լավագույն պատասխանեց վրացի Ռցխիլաձեն. «Եկեք չմոռանանք, որ վրաց-ադրբեջանական համադաշնությունում նախատեսվում է նաեւ Թուրքիայի անդամակցությունը: Կարծում եմ՝ այստեղ Վրաստանի համար խոսքը գնում է Ադրբեջանի հետ հարաբերությունների խորացման մասին՝ հեռանկարում ունենալով նաեւ ջերմ թուրք-վրացական հարաբերությունները»:

Առհասարակ տեսակամուրջին հետեւելիս՝ տպավորությունն այնպիսին էր, որ համադաշնությունը ոչ որի պետք չէ, իսկ նրան ում պետք է՝ պարզապես չգիտի, թե ինչ ասել է համադաշնություն: «Համադաշնություն նշանակում է, որ այն կազմող երկրները պետք է ունենան միասնական արտաքին եւ ներքին քաղաքականություն: Այս պարագայում ինձ համար հետաքրքրական է, թե ինչպիսի՞ն պետք է լինի վրաց-ադրբեջանական համադաշնության վարած քաղաքականությունը Մոսկվայի նկատմամբ՝ հաշվի առնելով, որ Բաքուն վերջերս ջերմացման փորձեր է անում, իսկ Թբիլիսին ընդամենը երկու տարի առաջ ավարտեց պատերազմը: Բացի այդ՝ հետաքրքրական է, թե ինչպե՞ս պետք է գործարկվի Վրաստանի հակակոռուպցիոն օրենսդրությունը՝ Ադրբեջանում», նշեց Ալեքսանդր Մարգարովը: Իսկ վրաց-ադրբեջանական «համադաշնային բլեֆի» վերաբերյալ վերջին հարցերը տվեց ռուս Տրոֆիմչուկը. «Ինձ էլ հետաքրքրում է, թե ինչպիսի՞ տեսք կունենա վրաց-ադրբեջանական համադաշնության դրոշը, ավելի կոնկրետ՝ ինձ հետաքրքրում է՝ խաչի եւ կիսալուսնի համադրումը՝ պետական դրոշին»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 26-28 ՆՈՅԵՄԲԵՐԻ

# Ջավախահայերի «100%-անոց» մասնակցության զեկույցը՝ Եվրոպայի խորհրդում

**Թե ինչպիսին էին իրենց նախապատրաստման եւ ընթացքի մեջ Վրաստանում մայիսի 30-ին անցկացված տեղական մարմինների ընտրությունները, «Ազգը» քանիցս անդրադարձել է՝ ներկայացնելով ինչպես տեղի ունեցած խախտումները, այնպես էլ հիմնական այն քաղաքականությունը, որ տարվում է Վրաստանի հայաբնակ շրջաններում, ընդ որում՝ հետագայում ընտրությունների «90-100 տոկոսանոց արդյունքների» ներկայացմամբ:**

**Հոկտեմբերի 26-28-ը Ստրասբուրգում տեղի է ունենալու Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի հերթական՝ 19-րդ նստաշրջանը, որի օրակարգում, ի շարս այլ հարցերի, ընդգրկված է նաեւ Վրաստանում վերջին տեղական ընտրությունների մասով զեկույցն ու դրա քննարկումը:**

**Հետաքրքրական կլինեն տեղեկանալ, թե ինչպես են Եվրոպայի խորհրդի այս մարմնում ընթանալու քննարկումները, երբ Վրաստանում, մասնավորապես ազգային փոքրամասնությունների առնչությամբ տեղական իշխանություններում ընտրությունները տարվում են հնարավորինս նրանց առավել շահագրգիռ հատվածը դուրս թողնելու ուղղությամբ:**

**Ավելին, վրացական իշխանությունների համար ձեւավորված «պրակտիկայով», գրեթե բոլոր տեսակի ու մակարդակի ընտրություններում ազգային փոքրամասնությունների կողմից տրված քվեները հաշվվում ու անկախ արդյունքներից գրվում են հօգուտ գործող իշխանությունների՝ այնպիսի բարձր մասնակցությամբ, որ անծանոթների մեջ տպավորություն կարող է ստեղծվել, թե Ջավախքից ոչ մեկը այս վերջին տարիներին չի արտագաղթել, այլ՝ հակառակը:**

**Նշենք, որ Կոնգրեսի աշնանային նստաշրջանում քննարկվելու են նաեւ հարցեր՝ նվիրված 2011-2012 թթ. քաղաքական առաջնահերթությունների որոշմանը, Կոնգրեսի կառուցվածքին եւ աշխատանքային մեթոդներին, նաեւ Էստոնիայում, Ռուսաստանում, Մոնտենեգրոյում տեղական կառույցների գործունեությանը եւ այլն:**

**Կոնգրեսում հրավիրյալի կարգավիճակով ելույթ ունեցողների շարքում կլինի նաեւ Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավան, որի հետ աշխատող քաղաքական խորհրդում գեթ մեկ հայ չկա, չնայած Վրաստանի մայրաքաղաքում հայերի թվաքանակը բավարարում է գոնե մեկ ներկայացուցիչ ունենալու համար: «Ազգը» ժամանակին փոխանցել էր թիֆլիսահայերի դժգոհությունն ու տեղական ընտրությունների հայ թեկնածուների բացակայությունը՝ որպես ապտակ ընդունելու գնահատականը:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների նիստ Ղրիմում

**Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունը երեկ մեկնել է Ուկրաինա (Ղրիմ, Պարտենիս)՝ ԱՊՀ-ի պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստին մասնակցելու:**

**Խորհրդի նիստում, որը կկայանա վաղը, օրակարգի համաձայն կքննարկվի 21 հարց ԱՊՀ-ի պետությունների պաշտպանական գերատեսչությունների համագործակցության վերաբերյալ, ինչպես նաեւ կընդունվեն հստակ որոշումներ ընդհանուր գործունեության ծավալման եւ ակտիվացման ուղղությամբ:**

**Հայաստանի պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ՝ նիստում կքննարկվեն նաեւ խորհրդի աշխատանքային մարմինների գործունեության արդյունքները եւ կհաստատվի խորհրդի 2011 թվականի աշխատանքային պլանը:**

Հ. Ա.

ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**Հոկտեմբերի 25-ից 31-ի միջոցառումների ծրագիր**

«Կինոաշուն» նախագծի շրջանակներում **հոկտեմբերի 12-ից նոյեմբերի 9-ը** Հայաստանի Ազգային Կինոկենտրոնը եւ «Նարեկացի» արվեստի միությունը ներկայացնում են ԿԻՆՈԵՐԵԿՈՆԵՐ:
**Յուրաքանչյուր երեքշաբթի եւ չորեքշաբթի, ժամը 19:00-ին**

**Հոկտեմբերի 26** -«Պատերազմի լուսավոր կողմը», «Հրաժեշտ Մերինեին» ժամը 19:00-ին
**Հոկտեմբերի 27**- «Նարեկացի որոնելիս» ժամը 19:00-ին
**հոկտեմբերի 28,** հինգշաբթի
ժ. 19:00-ին Վարպետության դաս (ժամանակակից երաժշտության վերլուծություն).
Հանդիպում կոմպոզիտոր Աշոտ Զոհրաբյանի հետ:
**հոկտեմբերի 29**, ուրբաթ
ժ. 15:00-ին Ցուցահանդես (գեղանկար). ներկայանում են «Շող» ստեղծագործական կենտրոնի անդամները:
Ցուցահանդեսը կտեւի մինչեւ նոյեմբերի 3-ը:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ

Ամերիկյան դեսպանատունը կազմակերպում է գրասենյակային ու բնակարանային կահույքի, մեքենաների, համակարգիչների եւ այլ ապրանքների աճուրդային վաճառք, որը տեղի կունենա **հոկտեմբերի 23-ին** Ամերիկյան փողոց 1 հասցեում **ժամը 10-19-ը:** Ապրանքները կարող եք զննել տեղում վաճառքին նախորդող ուրբաթ օրը, հոկտեմբերի 22-ին ժամը 10-19-ը: Զննումն անվճար է:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժինը:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: